[ARMENIAN.]

Miscellaneous.] [No. 19.

# SIN NO TRIFLE.

# ՄԵՂՔՆ

## ԽԱՂ ԱՆԵԼՈՑ ԲԱՆ ՉԷ

Թարգմանութիւն

Առաջին անգամ տպեալ Յամի Տեառն 1833
Ի ՇՈՒՇԻ

Նոյնն տպեալ 'ի Տպարանի Մկրտող Միսոնարաց 'ի Կալկաթայ
Վասն Ամիրիկու' Հաւատոյ Տետրակների Ժողովքին
1841.

# ՄԵՂՔՆ

## ԽԱՂ ԱՆԵԼՈՅ ԲԱՆ ՉԷ

---

Ամենայն անձինք իմ են. որպէս անձն հօր՝ նոյնպէս և անձն որդւոյ։ անձն որ մեղիցէ՝ նոյն և մեռցի։ Եզեկիէլ. 18. 4։

Զի թոշակն մեղաց՝ մահ է. Հռովմայեցւոց. 6. 23։

Մի՞ թէ կամելով կամիցի՞մ զմահ մեղաւորին ասէ Տէր Տէր՝ որպէս զդառնալ նորա ՚ի չար ճանապարհէ՝ և կեալ։ Եզեկիէլ. 18. 23։

Էս ի՞նչ զարմանալի աշխարհք է որ նորա մէջն մենք կենումենք։ Լուսոյ իշխանն և խաւարի իշխանը. բարի մարդիքն և չար մարդիքը. սրբութիւնն և մեղքն՝ էդ ամենին ծաղր անելոյ բան են շինում և ընտրվում։ Բայց շատ վախենալի և վնաս տուօղ յիմարութիւն է՝ էնպէսի բաներով ծաղր անելն, որ շատ ահաւոր և ծանր են ինչու որ՝ սաղոմոնն սովորցնումէ. թէ յիմար են նորանք՝ որ մեղքով ծաղր են անում։ Առակ. ԺԴ. 9։ Էս տեղ երեխաներ ենք տեսնում որ առաջ անիրաւութիւն են գործում, և յետոյ ծաղր են անում նորանով. վա՜յ, որ շատ անգամ էլ անօրէն ծնողքն սիրտ են տալիս նորանց էնպէս ծաղր անելոյ համար *։ Եւ էնտեղ գինամոլ և հարբած մարդը † կանգնած տեսնումենք, որ իրան հարբեցողութեան համար պարծենումէ, և անառակն իրան շատակերութեան համար, և խաղանօղն իրան արհեստի և խաբէութեան չափին համար։ Էնպէս շատ մարդիք կան, որ իրանց կեանքի ամէն օրերումն հենց իրանց ամօթովն են պարծենում։ Փիլիպեցւոց։ 3. 19։

Չար մարդիքն շատ ուրախանումեն, երբ որ արդարների վարքերումն սխալմունք են տեսնում։ Ապա հաւատացեալ քրիստոնեանքներն ինչպէսի մարդիք պիտի լինին ամէն սուրբ վարքով, և աստուածպաշտութենով, որ հակառակօղների սուտ պատճառանքները կտրեն, և յիմար մարդկանց անխելքութիւնը պապանձացնեն։ Սիրելի կարդացօղ. կը լինի՞ որ դու էլ փորձվիս որ ծիծաղելով կամ թեթևամըտութեան նըշանով, և կամ մին ուրիշ կերպով սիրտ տաս էնպէսի բան անելոյ՝ որ նորան կարօղ չէս քո սրտումըդ հաւանիլ։ Ապա աղաչումենք քեզ՝ որ լաւ միտքդ առնես էս մըտածմունքներըս. որ էստեղ քո առաջիդ կըդնենք։

---

* Էս գէրքանի վերջումն տես նոտայ. Դէ. Վասն անօրէն ծնողաց ինչ է ասած ազգասէր և բազմաշխատ Մխիթար Վարդապետն։

Ա․ Ամէն ով որ մեղքովը ծիծաղումէ, նա ծաղր է անում, դեռ քանի որ աստուած բարկանումէ: Աստուած ամէն օր բարկանումէ չար մարդկանց վերայ: Սաղմ․ է․ 11:* Էն ի՞նչէ, որ նորա բարկութիւնըն վէր է կացնում: Էն ի՞նչ է, որ նորանով նորա հոգին տանջվումէ և չարչարվում: Էն ի՞նչ է որ վրէժխնդրութեան սուրըն կախել է տալիս մեղաւոր մարդկանց գլխի վերայ: Ականջ դիր էդ խօսքին և իմաց թէ աստուծոյ բարկութիւնն երկնքիցն կը յայտնվի մարդկանց ամէն ամբարշտութեան և անիրաւութեան վերայ: Հռօմ․ ա․18: Եւ եթէ հենց մին երկրաւոր թագաւորի բարկութիւնն մին առիւծի գռալուն նման է, ապա մեծ աստուծոյ բարկութիւնն քանի՞ ահաւոր պիտի լինի:

Բ․ Ամէն ով որ թեթևամտութենով մեղքովը ծաղր է անում նա բոլոր մարդկային խեղճութենովը է ծաղր անում: Մենք ապրումենք արտասունքի ձորի մէջն․ որտեղ որ բանտեր և հիւանդների և ուրիշ անթիւ ցաւերի տեղերանք կան և շատ զօրութենով էն երևելի ճշմարտութիւնըն ցոյց են տալիս մեզ՝ թէ մարդոյ խեղճութիւնն և ողորմելութիւնն մեծ է իրան վերայ: Ժողովող․ է․ 6․ Բայց վա՜յ․ էն շատ ուրախ և անառակ ամբարտաւաներն, որ նորանցով իշխանութիւն և առատութիւն են պատում․ Նորանք որ իրանց անհոգ կեանքըն՝ փոփոխելի անառակ և անցաւոր ուրախութենով, և էլ շատ անողորմ անառակութենով են մսխում և անցկացնում․ վա՜յ․ քանի՜ քիչ են միտք անում իրանց ուրախ ընկերութիւնների մէջն․ թէ հենց իրանց ծաղր անելու ժամանակումն անհամար մարդիք մահի ցաւերըն և էս կեանքիս ամէն կերպ նեղութիւններըն քաշումէ:

Գ․ Ամէն ո՛վ որ մեղքով ծիծաղումէ, նա մահովը է ծիծաղում: Պատճառըն որ՝ մեղքն աշխարհք մտաւ, և ապա մահն մեղքի ետևէն եկաւ: Հռօմ․ ե․ 12: Եւ մահն էս աշխարհքիս գողգոթա սարին նման, իբր գլուխ կտրելու տեղ է չինել․ և գլուխ կտրելու տեղըն խկի յարմար տեղ չէ, որ աշխարհական և մարմնաւոր ուրախութիւն անես նորանում:

Եթէ ամէն մեռելների ոսկորների մին շատ լայն և բարձր կիտուկ հաւաքվէին, և ապա մին մարդ հարցընէր՝ ինչպէս յէուն․ թէ էս ամէնըս ո՛վ սպանեց: Դ․ Թագ․ Ժ․ 9: Պատասխանն իսպառ պէտք էր էն լինի, թէ սորանց ամէնին մեղքն սպանեց:

Մահն էս աշխարհքիս և էն յաւիտենական աշխարհքին միջումն կանգնած է՝ իրան կզակըն բացարած և էսքան նեղ կարմունճիս վերայ կանգնումէ, որ էլ ոչ ո՛վ չի կարողանում անց կենա՛լ, բայց պէտք է թալանի պէս նորա ձեռքն ընկնի:

---

* Psalm vii. 11. God judgeth the righteous, and God is angry with *the wicked* every day. [illegible]

Դ. Ամէն մարդ մեղքովն ծիծաղումէ՝ հենց էն ժամանակն է ծիծաղում, երբ որ պէտք էր նորան սուգ անել: Մի թէ կարելի է որ մին մարդ իրան հիւանդութենովն խաղ անէ:

Անկարելի է: Ապա մեղքն շատ մեծ հիւանդութիւն է և էլ աղուտուօղ և մահաբեր բան է որ հոգին և մարմինըն սպանումէ. թէ գաղաղդու դեղն և մահլամն այսինքն Քրիստոսի արիւնն շուտով չըգործածվի բժշկելոյ համար: Մեղքն պատժապարտութիւն և յաւիտենական ամօթ է բերում մարդոյ վերայ: Ապա եթէ մարդն ծիծաղէ իրան մեղքերովն, նա հենց էն խաբէութենովն է ծիծաղում, որ նորանով իրան անձըն խաբեց: Նա ոչ մենակ յիմարութենով, բայց էլ չարութենով է վարվում. ինչու որ հենց իրան անձին յիմարութենովն ծիծաղիլն, յիմար և անխելք մարդոյ գործն է:

Ե. Ամէն ով որ մեղքովն ծիծաղումէ, նա դժոխքի տանջանքներովն է ծիծաղում. Պատճառն որ մեղքն բաց արած էն ահաւոր խոր անդունդըն: մեղքն ծնած էն որդըն, որ իսկի մին ժամանակ չի մեռնիլ: Մեղքն վառեց էն կրակի բոցըն որ իսկի մին ժամանակ չի անցնիլ: Մեղքն տանումէ մարդկանց էն լաց լինելոյ և սուգ անելոյ և ատամները կրճտացնելոյ տեղն. որտեղ որ յաւիտեան պիտի մնան:

Ո՛վ անհոգ և անմիտ մեղաւոր. մի՛ թէ հե՞շտ բան է կենդանի աստուծոյ ձեռքն ընկնիլ, նորա անէծքի ծանրութիւնըն քաշել, և յաւիտենական կրակի մէջ բնակվիլ: Մի թէ յո՞յս կունենաս որ դժոխքի մէջ էլ մեղաւոր ուրախութիւն վայելես քո ընկերներին հետ, էնտեղ որ նորանց տանջանքի ծուխն վէր է ելլում յաւիտեանս յաւիտենից: Էս միտք արէք, դուք ամէնքդ որ աստուծոյն մոռանումէք. որ չըլինի թէ նա ձեր միջիցն կտրէ և ո՛չ ով չըկայ որ փրկէ ձեզ: Մտքներդ առէք էս, դեռ քանի որ նորա բարկութեան մեծ օրն չի եկել: Մի՛տք արէք ձեր ճանապարհներին համար, և ձեր ոտներըդ յետ դարձրէք դէպի նորա վկայութիւններն: Պատճառն որ էդ վկայութիւններումդ մին փրկիչ է յայտնված որ գտնէք նորան. և նորա անունն Յիսուս է: Ահա հիմիկ է ընդունելի ժամանակն, ահա հիմիկ է փրկութեան օրն. Բ. Կոր. 6. 2: Տէր Յիսուսին Քրիստոսին հաւատա, և կապրիս: Գործ. 16. 31:

Զ. Ամէն ով որ մեղքով ծիծաղումէ, նա Յիսուսի ցաւերովն և չարչարանքներովն է ծիծաղում: Եւ էս մտածմունքս ամէնից ահաւոր է՝ եթէ Քրիստոսի անձին փառաւորութեանն մտիկ տանք: Պատճառն որ՝ ստեղծվածներով ծաղր անելն էնքան չար է. ապա ա՜յ որդովն ծաղր անելն որքան անասելի չար և ահաւոր պիտի համարվի: Ոչ ո՛վ իսկի մին ժամանակ էնքան անարգանքով չի չարչարվեցաւ, ինչպէս Յիսուսն չարչարվեցաւ: Քարասիրտ և ռամիկ մարդիքն նորա երեսըն ծածկեցին և սիլլայ տուին նորան. Մարկ. 14. 65: և ամէնից շատ անարգ կերպով խայտառակ արին նորան: Էն ժամանակն թքեցին նորա երեսին:

Մարկ. ԺԵ. 27.—31։ Հերովդէսն և նորա զինուորներն Յիսուսին ծաղր արին և կռապաշտ հռոմէական զինուորներն ծաղր անելոյ համար նորան մին ծիրանի շոր հագցրին. և նորա ձեռքն մին ղամիշ դրին՝ որ թագաւորական գաւազանի տեղ լինի. և սրանով ծաղր արին էն արդար իրաւունքըն, որ նա իբր մարդկանց թագաւորն ունէր։ Եւ երբ՞ որ նա խաչին վերայ վերացաւ՝ օհ ամմէնից սարսափելի է պատմել. ծաղր արին նորան էն ահաւոր ցաւերումն՝ որ էլ նորանցով մեռաւ նա։ Օտար մարդիքն որ էնտեղով անց էին կենում. իրանց գլուխներըն շարժեցին և ասացին, թէ որ դու Աստուծոյ Որդին ես. վէր եկ էդ խաչիցդ։ Քահանայապետներն, կարդացողներն, և ծերերն շատ սաստիկ անարգանքով և ծաղր անելով ասացին թէ ուրիշներն ապրեցրուց ինքըն իրան չի կարում ապրեցնել։ Եւ հենց էն գողերն էլ որ նորա հետ խաչվեցան. ուրիշներին նման նախատինք դրին նորա վերայ։ Մտթ. 27. 39—44։

Եւ դու ով անառակ մեղաւոր. մի՛ թէ դո՞ւ էլ քո ձայնըդ նորանց ձայնին հետ կը խառնես, որ նարան նախատինք տաս. մի՛ թէ դո՞ւ էլ կըհամարձակվիս որ Յիսուսովն խաղ անես, և թեթևամտութենով նորա աղօթքին, արտասունքներին, հառաչանքներին և արիւնախառն քրտունքին և էն պաղի մէջ քաշած ամմէն նեղութիւններին համար, և չուանի ղամչով սաստիկ ծեծվելոյն համար, և փշից արած պսակ չարչարվելոյն համար ծաղր անես. Մտթ. 27. 26—31։ Ո՛վ հաւանկայց՝ որ նորա հետ Գողգոթա սարն գնաս։ էնտեղ կանգնի՛ր և տես. լաւ միտք առ և քննի՛ր։ Եթէ էսպէսի տեղի մէջ և էսպէսի ահաւոր բան տեսնելով կարենաս ծաղր անել. ապա հրեշտակներն ի՞նչ պիտի ասեն։ Ո՞վ կասէ՝ եթէ աւելի տրտմութենով կամ թէ զարմանքով լցված կը լինի։ Նորանք սաստիկ ցանկութենով էն արիւնով լցված փայտի չորս կողմովն պատեցան, որ էն զարմանալի բանըն տեսնեն, որ կենաց Տէրն մեռաւ։ Եւ թէ որ կարելի լինէր որ նորանց աչքերն մին կաթ արտասունք թափեն, ապա տրտմելի զարմանքով էն տեղ թափած կը լինէին։

Արա համար՝ հիմիկ ծաղր անող մի՛ լինիք, որ չըլինի թէ ձեր կապանքներն հաստատվին և պնդանան։ Եսայ. ԻԸ. 22։ Եթէ Աստուած ապաշխարութիւն տայ քեզ կեանք ըստանալոյ համար. ապա Քրիստոսի համար սուգ և ողբ կանես, ինչպէս որ մին մարդ սուգ է անում իրան միածին որդոյ համար, և տրտմութ՟ մէջ կը լինիս, ինչպէս որ մին մարդ տրտմութեան մէջ է իրան առաջինեկ որդոյ մեռնելոյն համար։ Զաքարեայ. 12.10։ Վ Ե Ր Ջ

---

Հարց։ Զի՞նչ է մեղքն։

Պատասխան։ Մեղքն է յանցանք կամ անօրէնութիւն. 1. Յովհ. 3. 4։ [illegible]. ամէնայն խօսք. գործք. և ցանկութիւն որ լինին ընդդէմ

Օրինաց. և Պատուիրանացն ԱՅ։ այս է զոր ասեն մեղայ բանիւ. գործով. և մտօք։ և սոյն այս մեղք և յանցանքն երկու տեսակ է։

Մինն է սկզբնական. և Միւսն է ներգործական։

Հարց։ Սկզբնական մեղքն զի՞նչ է։

Պատասխան։ Սկզբնական մեղքն է. երբոր Ադամ և Եւայ մեղք գործեցին և մեղաւոր դառցան. յետոյ խիզան ծնան։ սոյն այս խիզանները իւրեանց մեղաւոր ծնողաց մեղաւոր հոգի և մարմնուցն ծնվելով. իւրեանց մեղաւոր ծնողաց մեղքիցն մասն և բաժին գդան։ զոր օրինակ ինչպէս ծառն. էնպէսել նորայ պտուղն կլինի։ վ՟յ ասէ Առաքեալն Պօղոս ՙԶի որպէս ՚ի միոջէ մարդոյ (տ՟ Ադամայ) մեղք յաշխարհ մտին՝ և ՚ի մեղաց անտի մահ. և այնպէս յամ մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ամենեքին մեղան։ Ապա ուրեմն՝ որպէս միոյն (տ՟ Ադամայ) յանցանօք յամ մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն (տ՟ Քի) արդարութեամբ՝ յամ մարդիկ արդարութիւն կենաց։ Զի որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ՝ (տ՟ Ադամայ) մեղաւորք բազումք եղեն. նոյնպէս և հնազանդութեամբն միոյն, (տ՟ Քի) արդարք բազումք եղիցին՚։ Հռով. 5.12.18.19։ ահա այսպէս Ադամայ մինչեւ այսօր ով ով որ ծնելեն. և ծնվումեն ամենքնել հօր և մօր մեղաւոր բնութենումն և բնութենիցն են ծնվում. և նոցն մեղաւոր բնութե մասն և բաժին են գդնում. (բացի Տէր Յս փրկիչն մեր. Ղուկ. 1. 34. 35։ վ՟յ տես Հաւատամքումն ինչպէս է ասում։) ահա այսէ սկզբնական մեղքն։ վ՟յ Դաւիթ Մարգարէն ասումէ ՙԱնօրէնութեամբ յղացաւ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ։՚ Սաղ. 50. 7։

Հարց։ Ներգործական մեղքն զի՞նչ է։

Պատասխան։ Ներգործական մեղքն այնէ. որ ամէն ոք ինքն ԱՅ Օրէնք և Պատուիրանքին ընդդէմ է անում բանիւ. գործով. և մտօք։

Հարց։ Զի՞նչ է բանիւ և բերանով մեղք գործելն։

Պատասխան։ Բանիւ. և բերանով մեղք գործելն է. սուտ խօսկ. և զրոյց ասելն. և սուտ երդում ուտելն. Ղևտ. 19. 12։ և կամ խօսկայ միջում ԱՅ անունովն երդում ուտելն. Ել. 20. 7։ և ևս խօսկայ միջում երկնքով երդում ուտելն։ գետնքով երդում ուտելն։ երուսաղէմ քաղաքով երդում ուտելն։ քո՝ կամ այլոց գլխով երդում ուտելն Մատ. 5. 33—37։ բանբասանք առելն։ կեղծաւորութեամբ խօսելն։ յուշունց տալն։ անօրէն դիտմամբ համբոյրն։ և քէֆօվլանալն։ էս ամէնն. և էլ ինչ որ սորանց նման են՝ այն ամէնն էլ բանիւ և բերանով մեղք գործելէ։

Հարց։ Գործով մեղք գործելն ո՞ւն է և կամ զի՞նչ է։

Պատասխան։ Կռապաշտութիւնն։ ջադուքարութիւնն։ քարկոծելով. չափելով. խմբարելով. գրելով գողութիւն առելն. եւ։ արուագիտութիւն։ իգամոլութիւն։ անասնագիտութիւն։ շնութիւն։ պոռնկութիւն։ մարդասպանութիւն. դեղով. զէնքով. և կամ որոք մին

կերպիւ որ մարդասպանութիւն լինի: Եւս Թակելով. կամ դեղով յղի կնկայ երեխէն վէր գձել տալն մարդասպանութիւն է: (Եւ Բայց հիւանդաց Եւ Բանդարկելոց տեսութիւն գնալն: Եւ ժամ գնալն:) Կիրակի օրն վիզիթ գնալն: և վիզիթաւորէրին ընկալնելն: պատիւ տալն. և պատիւ ուտելն: և կամ որոք մին աշխարհական բանի և գործի վէրայ գնալն. կամ ձեռնամուխ լինելն է * գործքով մեղք գործելն:

Հարց: Զի՞նչ է մտօք և ցանկութեամբ մեղք գործելն:

Պատասխան: Մտօք և ցանկութեամբ մեղք գործելն է. ինչ ինչ բան. և գործ որ ընդդէմ է Ածային Օրինաց և պատուիրանացն. նոյնն միտածել. և սրտով ցանկանալն: զորօրինակ ասէ Տէրն մեր Յս որ հայի 'ի կին մարդ առ'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում': Մտթ. 5. 28: ահա այսէ. և էլ ինչ որ սորայ նմանն է. այն ևս է մտօք մեղք գործելն:

Ցանկութիւնն անիրաւ միայն յԱԾ, և ո՛չ յաշխարհական դատաւորաց կարէ պատժիլ. զի մարդիկ ո՛չ կարեն գիտել՝ կամ դատել զցանկութիւն մարդոյն, այլ միայն ԱԾ, որ քննէ զսիրտս մեր: 1. Թագ. 16. 7: Երե. 17. 10: 1. Թես. 2. 4: Ուստի ո՛չ գոն մարդկային օրէնք ընդդէմ մարմնաւոր՝ անկարգ ցանկութեան. միայն ԱԾ պատուիրեաց թէ՝ Մի՛ ցանկանար Յմի, զինչ ընկերի քո իցէ: Էս մասին լիովին տես Հայելի Ածաշունչումն: Յաղագս ցանկութեան Երես. 223:

Մեղք. մեղաց. գք: || մեղանք, կամ յանցանք. և կամ վնասք չարեաց՝ արարեալ ընդդէմ օրինաց: Ծննդ. 18. 20: Մտթ. 12. 31: Մերթ ևս առեալ լինի փոխանակ մեղադրութեան. ըստ այնմ Հռօմ. 9. 19: մեղ ևս զի դնէ. քզ ընդդէ՞ր դնէ զմեղադրութիւն: իսկ երբեմն 'ի սբ գիրս առնանի փոխանակ պատժոյ մեղաց. և կամ փոխանակ մեղապարտութեան: Ելից. 20. 5: Եզեկ. 18. 20: Երբեմն ևս առեալ լինի փոխանակ զոհին կամ պատարագին, որ վասն մեղաց. ըստ այնմ. Ովս. 4. 8. զմեղս ժողովրդեան իմոյ կերիցեն: Այնպէս է և 2. Կորն. 5. 21. ուր ասի. Զայն՝ որ ո՛չն գիտէր զմեղս, վն մեր մեղս արար. քզ Հայր Աստուած զորդին իւր միածին, որ ո՛չ գիտէր զմեղս. վն մեր զոհ քաւութեան մեղաց արար: Արդ՝ գիտելի է. զի բառս այս միշտ յոգնականապէս վարի, զի եզականն ո՛չ կարէ հոլովիլ, և ո՛չ 'ի գործ ածիլ, եթէ ո՛չ գուցէ ուրեք ուրեք յարելով յայլ մասունս բանի, զո՞ր օրինակ. մեղ ինչ ո՛չ գոյր նդ. կամ մեղ ևս զի դնէ. և այլն: Յոհ. 15. 22. և. 24: Եւս

Յանցանք. անաց. գք: (անեզ.) զանցառութիւն պատուիրանաց, կամ օրինազանցութիւն. կամ մեղք. կամ վնասք չարեաց: Սաղմ. 21. 2: Հռօմ. 4. 25: տես Բառս Մեղք. Եւ Յանցանք. 'ի Բառս Գիրք Հայկական Լեզուի:

---

* Եւս տետրակի վերջումն տես Նմրյ. 2. վասն Կիրակի օրն սուրբ պահելն:

## Յանցանաց Օրինակներ

### Ադամ և Եւայ

Ծնն . 3. 6. * Եւ ետես կինն՝ զի բարի էր ծառն 'ի կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ, և գեղեցիկ 'ի տեսանել։ և առ 'ի պտղոյ նր̅, եկեր. և ետ առն իւրում ընդ իւր, և կերան[1]։ 7. * և բացան աչք երկոցունց, և գիտացին զի մերկ էին. և կարեցին տերևս թզենւոյ, և արարին իւրեանց սփածանելիս[2]։

### Կային և Հաբէլ

Ծնն . 4. 8. * Եւ ասէ կային ցհաբէլ եղբայր իւր, եկ երթիցուք 'ի դաշտ։ և եղև իբրև չոգան 'ի դաշտ անդր, յարեաւ կային 'ի վերայ աբելի եղբօր իւրոյ և սպան զնա[3]։ 9. * Եւ ասէ Տր̅ Ած̅ ցկային. ու՞ր է հաբէլ եղբայր քո. և նա ասէ՝ չգիտեմ. միթէ պահապա՞ն իցեմ եղբօրն իմոյ[4]։ 10. * Եւ ասէ Ած̅. զի՞նչ գործեցեր զայդ. գոչումն արեան եղբօր քո բողոքէ առ իս յերկրէ[5]։ 11. * և արդ՝ անիծեալ լինիջիր դու 'ի վ̅ր երկրի, որ եբաց զբերան իւր ընդունել զարիւն եղբօր քոյ 'ի ձեռաց քոց։

### Ղամէք

Ծնն . 4. 19. * Եւ առ իւր ղամէք երկուս կանայս. անուն միումն ադա. և անուն երկրորդին սելլա[6]։ սա եղև առաջին չար օրինակ պոռնկութեան. կամ շնութեան։

### Նոյ

Ծնն . 9. 20. * Եւ սկսաւ նոյ, այր հողագործ զերկիր գործել. և տնկեաց այգի[7]։ 21. * և արբ 'ի գինւոյն և արբեցաւ. և մերկացաւ 'ի տան իւրում[8]։ 22. * Եւ ետես քամ հայր քանանու զմերկութիւն հօր իւրոյ, և ել պատմեաց երկուց եղբարց իւրոց արտաքոյ։ 23. * Եւ առեալ սեմայ և յաբեթի հանդերձ, եդին 'ի վերայ թիկանց երկոցուն, և գնացին յետս յետս, և ծածկեցին զմերկութիւն հօրն իւրեանց. և զերեսս իւրեանց յետս ընդդէմ ունէին, և զմերկութիւն հօրն իւրեանց ոչ տեսին[9]։ 24. * Եւ սթափեցաւ նոյ 'ի գինւոյ անտի իւրմէ, և գիտաց զինչ արար ընդ նա որդին իւր կրտսեր։ 25. * և ասէ. անիծեալ քանան մանուկ, և եղիցի ծառայ եղբարց իւրոց[10]։ 26. * Եւ ասէ օրհնեալ տէր Ած̅, Ած̅ սեմայ, և եղիցի քանան ծառայ նր̅[11]։ 27. * ընդարձակեսցէ Ած̅ յաբեթի, և բնակեսցէ 'ի տան սեմայ. և եղիցի քանան ծառայ նոցա[12]։

---

[1] 1. Տիմ. 2. 14: Ծնն. 3. 12. 17: [2] Ծնն. 3. 5: 2. 25: [3] Մատ. 23. 35: 1. Յովհ. 3. 12: Յուդայի. 11: [4] Սաղ. 9. 12: Յովհ. 8. 44: [5] Եբր. 12. 24: Յայտ. 6. 10: [6] Ծնն. 2. 18. 24: Մաղ. 2. 15: Մատ. 19. 4—6. 8: [7] Ծնն. 3. 19. 23: 4. 2: Առակ. 12. 11: [8] Առակ. 20. 1: 1. Կոր. 10. 12: [9] Ելք. 20. 12: Գաղ. 6. 1: [10] 2. Օրէ. 27. 16: Յես. 9. 23: 3. Թագ. 9. 20. 21: [11] Սաղ. 143. 15: Եբր. 11. 16: [12] Եփես. 2. 13: 14: 3. 6:

## Մարիամ և Ահարոն

Թւոց.12.1. * Եւ բամբասեցին մարիամ և ահարոն զմովսէս վասն կնոջն եթովպացւոյ՝ զոր առ մովսէս. զի կին եթովպացի առ [1]: 2 * և ասեն՝ թէ ընդ մովսիսի միա՞յն խօսեցաւ տր. ո՞չ ապաքէն և ընդ մե՞զ խօսեցաւ: և լուաւ տր [2]: 3. * Եւ այրն մովսէս հեզ էր յոյժ քան զամ մարդիկ՝ որ էին 'ի վերայ երկրի: 4. * Եւ ասէ տր նոյնժամայն՝ ցմովսէս և ցահարոն և ցմարիամ. ելէք դուք երեքին 'ի խորանն վկայութեան: և ելին երեքին 'ի խորանն վկայութեան [3]: 5. * Եւ էջ տր սեամբ ամպոյ, և եկաց առ դրան խորանին վկայութեան. և կոչեցան ահարոն և մարիամ: և ելին երկոքեան [4]: 6. * Եւ ասէ ցնս տր. լուարուք բանից իմոց. եթէ լինիցի մարգարէ 'ի ձէնջ տն, տեսլեամբ երևեցայց նմա, և երազով խօսեցայց ընդ նմա [5]: 7. * Ոչ այնպէս ոպ ծառայն իմ մովսէս՝ որ յամ տան իմում հաւատարիմ է [6]: 8. * բերան 'ի բերան խօսեցայց ընդ նմա, երևօք և ո՛չ առակօք. և զփառսն տն եաես: և ընդէ՞ր ո՛չ երկերուք բամբասել զծառայն իմ մովսէս [7]: 9. * Եւ եղև բարկութիւն սրտմտութեան տն 'ի վր նց՝ և գնացին:

10. * և ամպն վերացաւ 'ի խորանէ անտի: և ահա մարիամ բորոտեալ էր իբրև զձիւն. և հայեցաւ ահարոն ընդ մարիամ, և ահա՝ բորոտեալ էր [8]: 11. * Եւ ասէ ահարոն ցմովսէս. խնդրեմ 'ի քէն տր, մի՛ ածեր 'ի վր մեր մեղս. զի անգիտացաք. և քանզի մեղաք՝ [9] 12. * մի՛ լինիցի հանգոյն մահու, իբրև զվիժած որ ելանիցէ յարգանդէ մօր՝ և ուտիցէ զկէս մարմնոյ նր [10]:

13. * Եւ աղաղակեաց մովսէս առ տր՝ և ասէ. խնդրեմ 'ի քէն ած, բժշկեա զնա: 14. * Եւ ասէ տր ցմովսէս. եթէ հօր իւրոյ թքանելով թքեալ էր ընդ երեսս նր՝ չամաչէ՞ր զեւթն օր: մեկնեսցի զեւթն օր արտաքոյ բանակին՝ և ապա մտցէ [11]: 15. * Եւ զատուցաւ մարիամ արտաքոյ բանակին զեւթն օր: և ժողովուրդն ո՛չ չուեաց՝ մինչև սրբեցաւ մարիամ [12]:

## Մովսէս և Ահարոն

Թւոց. 20. 7. * և խօսեցաւ տէր ընդ մովսիսի՝ և ասէ: 8. * Առ դու զգաւազանն, և եկեղեցացո զժողովուրդն, դու և ահարոն

---

[1] Ելք. 2. 21: [2] Ելք. 15. 20: Միք. 6. 4: Ծնն. 29. 33: Թւ. 11. 1: 4.Թագ. 19. 4: Եսա. 37. 4: Եզե. 35. 12. 13: [3] Սաղ. 75. 9: [4] Թւ. 11. 25: 16. 19: [5] Ծնն. 15. 1: 46. 2: Յովբ. 33. 15: Եզե. 1. 1: Դան. 8. 2: 10. 8. 16. 17: Ղուկ. 1. 11. 22: Գործ. 10. 11. 17: 22. 17. 18: Ծնն. 31. 10. 11: 3.Թագ. 3. 5: Մատ. 1. 20: [6] Սաղ.104. 26: Եբր. 3. 2. 5: 1.Տիմ. 3. 15: [7] Ելք. 33. 11: 2.Օրէ. 34. 10: 1.Կոր. 13. 12: Ելք. 33 19: 2. Պետ. 2. 10: Յուդայ. 8: [8] 2. Օրէ. 24. 9: 4.Թագ. 5. 27: 15. 5: 2.Մնաց. 26. 19. 20: [9] 2. Թագ. 19. 19: 24. 10: Առակ. 30. 32: [10] Սաղ. 87. 5: [11] Եբր. 12. 9: Ղուկ. 13. 46: Թւ. 5. 2. 3: [12] 2.Օրէ. 24.9:2. Մնաց. 26. 20. 21:

եղբայր քո. և բարբառեսջիք 'ի վր՟ վիմին յանդիման նց՟, և տացէ
զջուրս իւր. և հանջիք նց՟ ջուր 'ի վիմէ անտի. և արբուսջիք ժողովր-
դեանն և անասնոց նց՟[1]։ 9. * Եւ առ մովսէս զգաւազանն յանդիման
տն՟՝ որպ՟ հրամայեաց նմա տր՟[2]։ 10. * և ժողովեցին մովսէս և ահարոն
զժողովուրդն հանդէպ վիմին։ Եւ ասէ ցնոսա. լուարուք ինձ
անհաւանք. միթէ 'ի վիմէ՞ս յայսմանէ հանիցեմք ձեզ ջուր[3]։ 11. *
Եւ ամբարձեալ մովսիսի զձեռն իւր, եհար զվէմն երկիցս անգամ. և
ել ջուր բազում. և արբ ժողովուրդն և անասուն նց՟[4]։
12. * Եւ ասէ տր՟ ցմովսէս և ցահարոն. փոխանակ զի ոչ
հաւատացէք դուք ինձ, սուրբ առնել զիս առաջի որդւոցն իսրայելի.
վս՟ այդորիկ ոչ տանիցիք դուք զժողովուրդդ յերկիրն՝ զոր ետու
դոցա[5]։ 13. * Այնէ ջուր բամբասանաց. զի բամբասեցին որդիքն
իսրայելի առաջի տն՟. և սրբեցաւ 'ի նոսա[6]։
23. * Եւ խօսեցաւ տր՟ ընդ մովսիսի և ընդ ահարոնի 'ի հովր
լերինն. 'ի սահմանս երկրին եդովմայեցւոց՝ և ասէ. 24. * Յաւելցի
ահարոն առ ժողովուրդ իւր, զի մի՛ մտցէ յերկիրն զոր ետու որդւոցն
իսրայելի. քանզի բարկացուցէք զիս 'ի վերայ ջուրցն բամբասանացն[7]։
25. * Առ դու զահարոն՝ և զեղիազար զորդի նր՟. և հան զնս՟
'ի հովր լեառն յանդիման ամ՟ ժողովրդեանն[8]. 26. * և մերկացո
յահարոնէ զպատմուճան նր՟, և զգեցուսցես եղիազարու որդւոյ նր՟։
և ահարոն յաւելեալ մեռցի անդ։ 27. * Եւ արար մովսէս որպ՟ և
հրամայեաց նմա տր՟, և եհան զնա 'ի հովր լեառն առաջի ամ՟ ժողովր-
դեանն։ 28. * և մերկացոյց յահարոնէ զհանդերձս նորա, և զգեցոյց
զնս՟ եղիազարու որդւոյ նորա[9]։ 29. * Եւ մեռաւ ահարոն 'ի գլուխ
լերինն։ և իջին մովսէս և եղիազար 'ի լեռնէ անտի[10]։ 30. * և ետես
ամ՟ ժողովուրդն թէ վախճանեցաւ ահարոն. և լացին զահարոն երեսուն
օր ամ՟ տունն իլի՟[11]։

## Մահն Մովսիսի

Երկրորդ Օրէնք, 32. 48. * Եւ խօսեցաւ տր՟ ընդ մովսիսի 'ի նմին
աւուր՝ և ասէ[12]. 49. * Ել դու 'ի լեառն նաբարի 'ի լեառն նաբաւ,
որ է յերկրին մովաբու յանդիման երեքովի. և տես զերկիրն զոր ես
տաց որդւոցն իլի՟ 'ի կալուածս[13]։ 50. * Եւ վախճանեաց անդէն
'ի լերինն յոր ելանիցես, և յաւելիր 'ի ժողովուրդ քո, զոր օրինակ
մեռաւ ահարոն եղբայր քո 'ի հովր լերինն, և յաւելաւ առ ժողովուրդ

---

[1] Ելք. 17. 5: Նէէ. 9. 15: Սաղ. 77. 15. 16: 104. 41: 113. 8: Եսա. 43. 20: 48. 21: [2] Թւ. 17. 10: [3] Սաղ. 105. 33: [4] Ելք. 17. 6: 2.Օրէ. 8. 15: 1.Կոր. 10. 4: [5] Թւ. 27. 14: 2.Օրէ. 1. 37: 3. 26: 32. 51: Ղկ. 10. 3: Եզէ. 20. 41: 36. 23: 38. 16: 1. Պէտ. 3. 15: [6] 2. Օրէ. 33. 8: Սաղ. 94. 8: 105. 32: Ելք. 17. 7: [7] Ծնն. 25. 8: Թւ. 27. 13: 31. 2: 2.Օրէ. 32. 50: Թւ. 20. 12: [8] Թւ. 33. 38: 2. Օրէ. 32. 50: [9] Ելք. 29. 29. 30: [10] Թւ. 33. 38: 2. Օրէ. 10. 6: 32. 50: [11] 2.Օրէ. 34. 8: [12] Թւ. 27. 12. 13: [13] Թւ. 33. 47. 48: 2.Օրէ. 34. 1:

իւր[1]· 51· * փոխանակ զի հեստեցէք բանի իմոյ 'ի մէջ որդւոցն
Իսրայէլի 'ի վ͞ր ջուրցն հակառակութեան 'ի կադէս՝ յանապատին
'ի սին· զի ո՛չ սրբեցէք զիս 'ի մէջ որդւոցն ի͞ղի[2]։ 52· * Յանդիման
տեսցես զերկիրն՝ և անդր մի՛ մտանիցես[3]։

Անհնազանդութիւն · Գողութիւն · և պատիժն Աքարայ

Յեսուայ ·7·1· * Եւ յանցեան որդիքն Իսրայէլի յանցանս, և
գողացան 'ի նզովից անտի։ և առ աքար որդի քարմեայ՝ որդւոյ
զամբրեայ, որդւոյ զարայի՝ 'ի ցեղէ յուդայ՝ 'ի նզովից անտի·
և բարկացաւ սրտմտութեամբ տէր որդւոցն Իսրայէլի[4]։
2· * Եւ առաքեաց յեսու արս յերիքովէ 'ի գայի՝ որ է յանդիման
բեթելայ, և ասէ ցնոսա · լրտեսեցէք զգայի ։ և ելին արքն և լրտեսեցին
զգայի ։ 3· * և դարձան առ յեսու և ասեն · մի՛ ելցէ ա͞մ
ժողովուրդս, այլ իբրև երկու հազարք կամ երեք հազարք արանց
ելցեն՝ և պաշարեսցեն զքաղաքն · մի՛ տանիր անդ զա͞մ ժողովուրդն՝
զի սակաւք են ։ 4· * Եւ ելին անդր 'ի ժողովրդենէն իբրև երեք
հազարք և փախեան յերեսաց արանցն գայեայ[5]· 5· * և կոտորեցին
'ի նոցանէ արք գայեայ արս՝ երեսուն և վեց· և հալածեցին զնո͞ 'ի դրանէն
մինչև խորտակեցին զնո͞ · և վիրաւորեցին 'ի զառիվայրին · և պակա-
սեցաւ սիրտ ժողովրդեանն և եղեն իբրև զջուր[6]։
6· * Եւ պատառեաց յեսու զհանդերձս իւր, և անկաւ 'ի վերայ
երեսաց իւրոց յերկիր առաջի տապանակին տ͞ն մինչև ցերեկոյ, ինքն
և ծերքն Իսրայէլի · և արկին հող զգլխովք իւրեանց[7]։ 7· * Եւ
ասէ յեսու · աղաչեմ զքեզ տ͞ր տ͞ր · ընդէ՞ր իսկ բնաւ անցանելով
անցոյց ծառայ քո զժողովուրդս զայս ընդ յորդանան, մատնել
զսոսա ամորհացւոցն՝ և կորուսանել զմեզ։ լաւ էր թէ անդէն
զետեղեալ և բնակեալ էաք առ եզերբ յորդանանու[8]։ 8· * յիս
տէր · և արդ զի՞նչ արարից՝ որովհետև կորացոյց Իսրայէլ զպարանոց
իւր առաջի թշնամեաց իւրոց։ 9։ * և լուեալ քանանացւոցն և ա͞մ
բնակչաց երկրին պատեսցեն զմեզ և սատակեսցեն յերկրէ ։ և զի՞նչ
արասցես զանուն քո մեծ[9]։
10· * Եւ ասէ տ͞ր ցյեսու · յոտն կաց, զի՞ անկեալ կաս 'ի վերայ
երեսաց քոց ·11· * մեղաւ ժողովուրդն, և անց զուխտիւ իմով զոր
ուխտեցի ն͞ց · և գողացան և առին 'ի նզովիցն, ստեցին, և արկին
յամանս իւրեանց[10]։ 12· * և ո՛չ ևս կարիցեն որդիքն ի͞ղի կալ առաջի
թշնամեաց իւրեանց · այլ դարձուսցեն զպարանոցս առաջի թշնամեաց

---

[1] Թւ. 20. 25. 28: 33. 38: [2] Թւ. 20.11. 12. 13: 27. 14: Դտ. 10. 3: [3] Թւ. 27. 12: 2.Օր. 34. 4: [4] Յես. 22. 20: 1.Մն. 2. 7: 2. 6: [5] Ղև. 26. 17: 2.Օր. 28. 25: [6] Յես. 2. 9. 11: Ղև. 26. 36: Սղ. 21. 15: [7] Ծն. 37. 29. 34: 1.Թգ. 4. 12: 2. Թգ. 1. 2: 13. 19: Նեէ. 9.1: Յոբ. 2. 12: [8] Ել. 5. 22: 4.Թգ. 3. 10: [9] Սղ. 82. 5: Ել. 32. 12: Թւ. 14. 13: [10] Հագ. 1: Յես. 6. 17. 18: Գործ. 5. 1. 2:

իւրեանց՝ զի եղեն 'ի նզովս. և ոչ ևս յաւելից լինել ընդ ձեզ,
եթէ ոչ բառնայցէք զնզովեալ զայդ 'ի միջոյ ձերմէ[1]: 13. * Արի սրբեա
զժողովուրդդ, և արասցես սրբել առ վաղիւ. Այսպէս ասէ տր
ած իլի. Նզովք են 'ի ձեզ իէլ. ոչ կարիցէք կալ առաջի թշնամեաց
ձերոց, մինչև բառնայցէք զնզովսն 'ի ձէնջ[2]: 14. * Եւ ժողովեսջիք
ամենեքեան ընդ առաւօտն ըստ ցեղից ձերոց. և եղիցի ցեղն՝ զոր
ցուցցէ տր, մատուսջիք ըստ տոհմից. և զտոհմն՝ զոր յանդիմանեսցէ
տր, մատուսջիք ըստ տանց. և զտունն՝ զոր յանդիմանեսցէ տր,
մատուսջիք ըստ արանց[3]: 15. * Եւ որ յանդիմանեսցի 'ի նզովսն,
այրեսցի ինքն հրով՝ և ամ տունն իւր, և ամ ինչ որ նր իցէ. զի
անց զուխտիւն տն, և արար անօրէնութիւն 'ի մէջ իլի[4]:

16. * Եւ կանխեաց յեսու ընդ առաւօտն, և մատոյց զժողովուր-
դըն ըստ ցեղիցն իւրեանց, և յանդիմանեցաւ ցեղն յուդայի.
17. * Եւ մատուցաւ ցեղն յուդայի ըստ տոհմից, և յանդիմանեցաւ
տունն զարայի. և մատուցաւ տոհմն զարայի ըստ արանց, և յանդիմա-
նեցաւ զամբրի. 18. * Եւ մատուցաւ տունն նորա ըստ արանց, և
յանդիմանեցաւ աքար որդի քարմեայ, որդւոյ զամբրեայ, որդւոյ
զարայի, 'ի ցեղէն յուդայ[5]:

19. * Եւ ասէ յեսու ցաքար. որդեակ իմ, տուր փառս այսօր
տն այ իլի, և տուր խոստովանութիւն, և պատմեա ինձ զինչ
գործեցեր. և մի' թաքուցաներ յինէն[6]: 20. * Պատասխանի ետ
աքար և ասէ ցյեսու. արդարև ես մեղայ առաջի տն այ իլի.
զայս ինչ և զայս գործեցի: 21. * տեսի յաւարին ամղան մի նկարէն
գեղեցիկ, և երկերիւր երկդրամեան արծաթոյ, և լեզու մի ոսկի՝
որոյ կշիռն երկդրամեան էր ձոյլ նր. և ցանկացեալ նց առի. և
ահաւանիկ թաքուցեալ կայ ընդ հողով 'ի վրանի իմում. և արծաթն
թաքուցեալ կայ 'ի ներքոյ նց: 22. * Եւ առաքեաց յեսու հրեշտակս
արս և ընթացան 'ի վրանն 'ի բանակն. և անդ թաքուցեալ կայր 'ի վրանի
նր. և արծաթն 'ի ներքոյ նց: 23. * հանին զայն 'ի վրանէ անտի
և բերին առ յեսու և առ ծերսն իլի՝ և եդին առաջի տն:

24. * Եւ առ յեսու զաքար զորդի զարայի, և եհան զնա 'ի ձորն
աքովրայ, և զուստերս նր և զդստերս նր, և զարջառ նր, և զէշ
նր, և զամ զոչխարս նորա, և զվրանս նր, և զամ ինչս նր. և
ամենայն իէլ ընդ նմա. և ած զնա յեմակն աքովրայ[7]: 25: * Եւ ասէ
յեսու ընդէ՞ր սատակեցեր զմեզ. սատակեսցէ զքեզ տր ըստ աւուրս
ըստ այսմիկ: Եւ քարկոծեցին զնա ամ իէլ քարամբք, և այրեցին

---

[1] Թւ. 14. 45: Դտ. 2. 14: 2. Օրէ. 7. 26: Յե. 6. 18: [2] Եսյ. 19. 10: Յե. 3. 5:
[3] Առկ. 16. 33: [4] 1. Թգ. 14. 38. 39: Հաւք. 11: Ծնն. 34. 7: Դտ. 20. 6:
[5] 1. Թգ. 14. 42: [6] 1. Թգ. 6. 5: Երե. 13. 16: Յվհ. 9. 24: Թւ. 5. 6. 7: 2. Մնա.
30. 22; Սղ. 50. 6; Դն. 9. 4; 1. Թգ. 14. 43; [7] Հաւք. 26; Յե. 15. 7;

զնոս հրով. և քարկոծեցին զնոս քարամբք[1]. 26. * և կուտեցին 'ի վերայ նորա կարկառ մեծ քարանց մինչև ցայսօր. և դադարեաց տէր 'ի սրտմտութենէ բարկութեան իւրոյ. վասն այնորիկ անուանեաց զնա եմակ աքովրայ մինչև ցայսօր[2]։

Յերոբովամ թագաւորի յետ եկեղող մարգարէի
անհնազանդութիւնն և պատիժն

3. Թագաւորաց .13.1. Եւ ահա այր այ եհաս 'ի յուդայ բանիւ տն 'ի բեթէլ, և յերոբովամ կայր 'ի վր սեղանոյն իւրոյ զոհել 'ի վր ։ 2[3]. * Եւ կոչեաց զսեղանն բանիւ տն՝ և ասէ. սեղան սեղան. այսպէս ասէ տր. ահա որդի ծնցի տան դաւթի՝ Յովսիա անուն նր ։ և զոհեսցէ 'ի վր քո զքուրմս բարձանցդ՝ որ զոհեն 'ի վր քո, և ոսկերս մարդկան այրեսցէ 'ի վր քո[4]։ 3. * Եւ ետ յաւուր յայնմիկ նշան՝ և ասէ. այս նշան է զոր խօսեցաւ տր՝ և ասէ, ահա սեղանդ պատառեսցի, և հեղցի պարարտութիւնդ որ 'ի վերայ դորա[5]։

4.* Եւ եղև իբրև լուաւ արքայ յերոբովամ զբանս առնն այ բարբառ, ելոյ 'ի վր սեղանոյն որ 'ի բեթէլ՝ ձգեաց արքայ զձեռն իւր 'ի սեղանոյ անտի և ասէ, կալարուք զդա. և գօսացաւ ձեռն նր՝ զի ձգեաց 'ի նա, և ոչ կարաց դարձուցանել զնա առ ինքն.5. * և սեղանն պատառեցաւ՝ և հեղաւ պարարտութիւնն 'ի սեղանոյ անտի, ըստ նշանին զոր ետ այրն այ բանիւ տն ։ 6. * Եւ ասէ արքայ յերոբովամ ցայրն այ. աղաչեա զերեսս տն այ քո, և արա աղօթս վս իմ և դարձցի ձեռն իմ առ իս ։ և աղաչեաց այրն այ առաջի տեառն, և դարձաւ ձեռնն արքայի առ նա, և եղև իբրև զառաջինն[6]։

7. * Եւ խօսեցաւ արքայ ընդ առնն այ՝ և ասէ. մուտ ընդ իս 'ի տուն՝ և ճաշեա, և տաց քեզ պարգևս[7]։ 8. * Եւ ասէ այրն այ ցարքայ. եթէ տացես ինձ զկէս տան քո, ոչ մտից ընդ քեզ. և ոչ կերայց հաց, և ոչ արբից ջուր 'ի տեղւոջս յայսմիկ[8]. 9. * զի այսպէս պատուիրեաց ինձ տր բանիւ և ասէ. մի՛ ուտիցես հաց, և մի՛ ըմպիցես ջուր. և մի՛ գնասցես ընդ նոյն ճանապարհ, ընդ որ երթանայցես[9]։10. * և գնաց զճանապարհ իւր. այլ ոչ ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկն՝ գնաց 'ի բեթէլայ ։

11. * Եւ մարգարէ մի ծեր բնակեալ էր 'ի բեթէլ, և եկին որդիք նորա և պատմեցին նմա զամ գործսն զոր արար այրն այ յաւուր յայնմիկ 'ի բեթէլ, և զբանսն զոր խօսեցաւ ընդ արքայի. և դարձուցին

[1] Յես. 6. 18: 1. Մնա. 2. 7: Գաղ. 5. 12: 2. Օրէ. 17. 5: [2] Յես. 8. 29: 2. Թագ. 18. 17: Ողբ. 3. 53: 2. Օրէ. 13. 17: 2. Թագ. 21. 14: Համբ. 24: Եսա. 65. 10: Ովս. 2. 15: [3] 4. Թագ. 23. 17: 3. Թագ. 12. 32. 33: [4] 4. Թագ. 23. 15. 16: [5] Եսա. 7. 14: Յովհ. 2. 18: 1. Կոր. 1. 22: [6] Ելք. 8. 8: 9. 28: 10. 17: Թիւ. 21. 7: Գործ. 8. 24: Յակ. 5. 16: [7] 1. Թագ. 9. 7: 4. Թագ. 5. 15: [8] Թիւ. 22. 18: 24. 13: [9] 1. Կոր. 5. 11:

զերեսս հօրն իւրեանց ,12. * և խօսեցաւ ընդ նա հայրն նց և ասէ ,
ընդ ո՞ր ճանապարհ գնաց : և ցուցին նմա որդիք նր ընդ ճանապարհն
ընդ որ գնաց այրն այ որ եկեալ էր 'ի Յուդայ :13. * Եւ ասէ ցորդիս
իւր · կազմեցէք զէշն · և կազմեցին նմա էշ · և ել 'ի նա ·14· *
և գնաց զհետ առնն այ , և եգիտ զնա նստեալ ընդ կաղնեաւն · և
ասէ ցնա՝ եթէ դո՞ւ իցես այրն այ եկեալ 'ի Յուդայ և ասէ , ես եմ :15.
* Եւ ասէ ցնա · եկ ընդ իս 'ի տուն , և կեր հաց : 16. * և ասէ ·
ոչ կարեմ դառնալ ընդ քեզ , և ո՛չ գալ ընդ քեզ · և ո՛չ կերայց
հաց և ո՛չ արբից ջուր 'ի տեղւոջս յայսմիկ[1] · 17. * զի այնպէս հրաման
տուեալ է ինձ բանիւ տն և ասացեալ , թէ մի՛ ուտիցես անդ հաց , և
մի՛ ըմպիցես ջուր · և մի՛ դառնայցես ընդ նոյն ճանապարհ ընդ որ
երթայցես[2]: 18. * Եւ ասէ ցնա · և ես մարգարէ եմ իբրև զքեզ ·
և հրեշտակ տն խօսեցաւ ընդ իս և ասէ , դարձո զնա առ քեզ 'ի տուն
քո , և կերիցէ հաց և արբցէ ջուր · և ստեաց նմա :19. * և դարձոյց
զնա ընդ իւր , և եկեր հաց 'ի տան նորա , և արբ ջուր :

20. * Եւ լինէր մինչդեռ նստէին նոքա 'ի սեղանն , եղև բան տն
առ մարգարէն որ դարձոյց զնա · 21. * և խօսեցաւ ընդ առնն այ
եկելոյ 'ի Յուդայ՝ և ասէ : այսպէս ասէ տր · փոխանակ զի դառնացուցեր
զբանն տն , և ո՛չ պահեցեր զպատուէրն զոր պատուիրեաց քեզ տր
ած քո · 22. * և դարձար՝ և կերար հաց , և արբեր ջուր 'ի տեղւոջդ-
յայդմիկ՝ զորմէ խօսեցաւ ընդ քեզ և ասէ , մի՛ ուտիցես հաց՝ և մի՛
ըմպիցես ջուր · արդ մի՛ մտցէ մարմին քո 'ի գերեզման հարց քոց[3]:

23. * Եւ եղև յետ ուտելոյն նր հաց և ըմպելոյ ջուր , հանդեր-
ձեաց էշ մարգարէին · և դարձաւ և գնաց : 24. * և եգիտ զնա
առիւծ 'ի ճանապարհին , և սպան զնա : և էր մարմին նր ընկեցեալ
'ի ճանապարհին , և էշն կայր առ նմա , և առիւծն կայր առ մար-
մնոյն[4]: 25. * Եւ ահա արք անցաւորք տեսին մեռեալ ընկեցեալ
'ի ճանապարհին , և առիւծն կայր առ ընթեր մեռելոյն · և մտին և
խօսեցան 'ի քաղաքին՝ ուր մարգարէն ծեր բնակեալ էր :

26. * իբրև լուաւ մարգարէն , որ դարձոյցն զնա 'ի ճանապարհէն ,
ասէ · այն այրն այ է որ դառնացոյց զբանն տն , և ետ զնա տր առիւ-
ծու և եբեկ զնա , և սպան զնա ըստ բանին տն զոր խօսեցաւ ընդ
նմա : 27. * Եւ խօսեցաւ ընդ որդիսն իւր և ասէ · հանդերձեցէք
զէշն , և հանդերձեցին · 28. * և գնաց և եգիտ զմարմին նորա
ընկեցեալ 'ի ճանապարհին · և էշն և առիւծն կային առ մարմինն .
և ո՛չ եկեր առիւծն զմարմին առնն այ , և ո՛չ եբեկ զէշն : 29.
* Եւ առ մարգարէն զմարմին առնն այ , և եդ զնա 'ի վր իշոյն ,
և դարձոյց զնա և եկն 'ի քաղաք մարգարէին ծերոյ կոծել և թաղ-
ել զնա : 30. * և ցածոյց զդին նորա մարգարէն 'ի թաղել զնա

---

[1] Համր. 8: 9: [2] 3. Թագ. 20. 35: 1. Թես. 4. 15: [3] Համր. 9: [4] 3. Թագ. 20. 36:

'ի գերեզմանի իւրում. և կոծեցան զնա և ասեն, վայ եղբայր[1]:
31. * Եւ եղև յետ կոծելոյն զնա, խօսեցաւ ընդ որդիսն իւր և
ասէ. եթէ մեռանիցիմ ես, թաղեսջիք զիս յայսմ գերեզմանի ուր
թաղեցաւ այրս ա͞յ, առ ոսկերս դորա դիջիք զիս զի ապրեսցին
ոսկերք իմ ընդ ոսկերս դորա[2]. 32. զի լինելով լինիցի բանն զոր
խօսեցաւ բանիւ տեառն 'ի վ͞ր սեղանոյն 'ի բեթէլ, և 'ի վերայ
տանց բարձանց որ 'ի սամարիա[3]:

33. * Եւ յետ բանիցս այսոցիկ ոչ դարձաւ յերոբովամ
'ի չարեաց իւրոց. և դարձաւ և արար 'ի մասնէ ժողովրդեանն
քուրմս բարձանց. որ կամէր լնոյր զձեռն իւր. և լինէր քուրմ
բարձանց[4]: 34. * Եւ եղև բանն այն 'ի մեղս տանն յերոբովամայ, և
'ի սատակումն և յապականութիւն յերեսաց երկրին[5]:

'Ի Կարգաւոր· Սաղմոս Դաւթի· ԺԳ:

1. * Ասաց անզգամն 'ի սրտի իւրում, թէ ոչ գոյ աստուած:
Ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց. ոչ ոք է որ
առնէ զբարի[6]: 2. * Տէր յերկնից նայեցաւ յա͞մ որդիս մարդկան,
տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն որ խնդրիցէ զաստուած[7]: 3. *
Ամենեքեան խոտորեցան՝ 'ի միասին անպիտանացան: Ոչ ոք է որ առնէ
զբարի, և ոչ ոք է մինչև 'ի մի[8]: 4. * Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան,
որ գործեն զանօրէնութիւն[9]: Որք ուտէին զժողովուրդ իմ որպէս
կերակուր հացի, 5. * և առ տէր ոչ կարդացին: Անդ երկիցեն
զերկիւղ՝ ուր ոչ իցէ երկիւղ †. 6. * զի տէր է յազգ արդարոց:
Զխորհուրդ աղքատի յամօթ արարէք, զի տէր է յոյս նորա[10]: 7. *
Ո տացէ 'ի սիոնէ զփրկութիւն իսրայէլի. 'ի դարձուցանել տեառն
զգերութիւն ժողովրդեան իւրոյ ցնծասցէ յակոբ՝ և ուրախ եղիցի
իսրայէլ[11]: ‡

Հռովմայեցւոց. 3.23. * Քանզի ամենեքեան մեղան. և նուաղեալ
են 'ի փառաց անտի աստուծոյ[12]: 24. * Եւ արդարանան ձրի նորին
շնորհօք 'ի ձեռն փրկութեան որ 'ի ք͞ս յ͞ս[13].

Եփեսացւոց. 2. 8. * Զի շնորհօք նորա էք փրկեալք 'ի ձեռն

---

[1] Երէ. 22. 18: [2] 4. Թա. 23. 17. 18: [3] Համար. 2: 4. Թա. 23. 16. 19: 3. Թա. 16. 24: [4] 3. Թա. 12. 31. 32: 2. Մնա. 11. 15: 13. 9: Դատ. 17. 12: [5] 3. Թա. 12. 30: 14. 10: [6] տառգիր. Սաղ. 10. 5: 52. 1: Ծնն. 6. 11. 12: Հռով. 3. 10: [7] Սաղ. 32. 13: 101. 20: [8] Հռով. 3. 10—12: [9] Երե. 10. 25: Ամո. 8. 4: Միք. 3. 3: Սաղ. 78. 6: Եսա. 64. 7: † Սաղ. 52. 6: [10] Սաղ. 9. 9: 141. 6: [11] Հռով 11. 26: Սաղ. 52. 7: Յովբ. 42.10: Սաղ. 125. 1: [12] Հռով. 3. 9: 11. 32: Գաղ. 3. 22: [13] Հռով. 4. 16: Եփե. 2. 8: Տիտ. 3. 5. 7: Մատ. 20. 28: Եփե. 1. 7: Կող. 1. 14: 1. Տիմ. 2. 6: Եբր. 9. 12: 1. Պետ. 1. 18. 19:

‡ Էս պետրանէ վերջնումն պէտ նումրայ Երէք · վրան վերեւի փչեալ յանցանաց օրինակներին · Գրիգոր Նարեկացին ինչ է ասում · հաս թէ ինչ է ասել:

հաւատոցն: և այս ոչ 'ի ձէնջ, այլ աստուծոյ պարգև է[1]. 9. * ոչ 'ի գործոց, զի մի' ոք պարծեսցի[2]:

Երկրորդ Տիմոթէոս. 1. 9. * Որ փրկեաց զմեզ, և կոչեաց 'ի կոչումն սուրբ ոչ ըստ գործոց մերոց՝ այլ ըստ իւրում յառաջադրութեանն և շնորհաց, որ տուաւ մեզ 'ի Քն Յն յառաջ քան զժամանակս յաւիտենից[3]:

Հռովմայեցւոց. 11. 5. * Նոյնպէս և յայսմ ժամանակի մնացորդք՝ ըստ ընտրութեան շնորհացն եղեն[4]: 6. * իսկ եթէ շնորհօք՝ ոչ ևս 'ի գործոց. ապա թէ ոչ՝ շնորհքն՝ ոչ ևս շնորհք լինին[5]:

Տիտոսի. 3. 3. * Զի էաք երբեմն և մեք անմիտք անհաւանք՝ մոլորեալք՝ ծառայեաք ցանկութեանց և պէս պէս անառակութեանց. չարութեամբ՝ և նախանձու շրջէաք, ատեցեալք՝ և զմիմեանս ատեաք[6]: 4. * իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն փրկչին մերոյ աստուծոյ յայտնեցաւ[7], 5.* ոչ 'ի գործոց արդարութեան՝ զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմութեանն՝ ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն, և նորոգութեամբ հոգւոյն սրբոյ[8]. 6. * զոր եհեղ 'ի մեզ առատութեամբ, 'ի ձեռն Յնի Քնի փրկչին մերոյ[9]. 7. * զի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց[10]: 8. * Հաւատարիմ է բանս. և 'ի սոյն կամիմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ արասցեն գործոց բարեաց վերակացու լինել՝ հաւատացեալքն յաստուած, զի այն է բարի և օգտակար մարդկան[11]:

Մատթէոս. 12. 31, * Վասն այդորիկ ասեմ ձեզ. ամենայն մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զհոգւոյն հայհոյութիւն մի' թողցի: 32. * Եւ որ ոք ասիցէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զհոգւոյն սրբոյ ասիցէ մի' թողցի նմա, մի' յայսմ աշխարհի՝ և մի' 'ի հանդերձելումն:

---

[1] Եփե. 2. 5: Հռով. 3. 24: 2. Տիմ. 1. 9: Հռով. 4. 16: Մատ. 16. 17; Յովհ. 6. 44. 65: Հռով. 10. 14—17: Եփե. 1.19: Փիլ. 1. 29: [2] Հռով. 3. 20. 27. 28: 4. 2: 9. 11: 11. 6: 1.Կոր. 1. 29. 30. 31: 2.Տիմ. 1. 9: Տիտ. 3. 5: [3] 1.Տիմ. 1. 1: Տիտ. 3. 4: 1. Թես. 4. 7: Եբր. 3. 1: Հռով. 3. 20: 9. 11: Տիտ. 3. 5: Հռով. 8. 28: 16. 25: Եփե.1. 4: 3. 11: Տիտ. 1. 2: 1.Պետ. 1. 20: [4] Հռով. 9. 27: [5] Հռով. 4. 4. 5: Գաղ. 5. 4: 2.Օրէ . 9. 4. 5: [6] 1. Կոր. 6. 11: Եփե. 2. 1: Կող. 1. 21: 3.7: 1.Պետ. 4. 3: [7] Տիտ. 2. 11: 1. Տիմ. 2. 3: [8] Հռով. 3. 20: 9. 11: 11. 6: Գաղ. 2. 16: Եփե. 2. 4. 8. 9: 2.Տիմ. 1. 9: 1.Յովհ. 3. 3. 5: Եփե. 5. 26: 1.Պետ. 3. 21: [9] Եզե. 36. 25: Յովէլ. 2. 28: Յովհ. 1. 16: Գոր. 2. 33: 10. 45: Հռով. 5. 5: [10] Հռով. 3. 24: Գաղ. 2. 16: Տիտ. 2. 11: Հռով. 8. 23.24: Տիտ. 1. 2: [11] 1.Տիմ. 1. 15: Տիտ. 1. 9: 3. 1. 14: 2. 14:

# ԹՈՒՂԹ

## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

1 Գլ. ԺԱ։ Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց
2 հաստատութիւն, եւ յանդիմանութիւն՝ որոց ոչն երեւին[1]։ * Զի
3 նովաւ վկայեցան առաջինքն[2]։ * Հաւատովք իմանամք հաստատեալ
զյաւիտեանս բանիւ այ, յաներեւութից զերեւելիսս եղեալ[3]։ *
4 Հաւատովք լաւ պատարագս հաբէլ քան զկայէն մատուցանէր
այ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի 'ի վր պատարագացն
եղեւ նմա վկայութի յայ. զի թէպէտ եւ մեռաւ 'ի նմին, սակայն
5 տակաւին խօսի[4]։ * Հաւատովք ենովք փոխեցաւ՝ զի մի՛ զմահ
ճաշակեսցէ. եւ ոչ ուրեք գտանէր, քանզի փոխեաց զնա ած. եւ
6 յառաջքան զփոխելն նր՝ վկայեցաւ հաճոյ լինել այ[5]։ * Բայց
առանց հաւատոց անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է
այնմ որ մերձենայ առ ած՝ թէ է ած. եւ որ խնդրեն զնա՝ լինի
7 պարգեւատու։ * Հաւատովք առեալ հրաման Նոյի՝ վասն չեւես
երեւելեացն զահի հարեալ կազմէր զտապանն 'ի փրկութի տան իւ-
րոյ, որով դատեցաւն զաշխարհ. եւ հաւատոցն արդարութե եղեւ
8 ժառանգաւոր[6]։ * Հաւատովք՝ որ աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր
եղեւ ելանել 'ի տեղին, զոր առնլոց էր 'ի ժառանգութի. ել
9 գնաց՝ եւ ոչ գիտէր յո՞վ երթիցէ[7]։ * Հաւատովք պանդխտեցաւ
յերկրին աւետեաց իբրեւ յօտարութե. խորանօք բնակեաց սահակաւ
10 եւ յակովբաւ հանդերձ ժառանգակցօք նոյին աւետեաց[8]։ * Քանզի
ակն ունէր հիմամբք հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտարապետ
11 եւ արարիչ ած է[9]։ * Հաւատովք եւ ինքն սառա՝ որ ամուլն էր,
զօրութի առնլոյ զսերմն որդեծնութե՝ ընդունէր, եւ 'ի տարա-
ժամ հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ զայն՝ որ
12 խոստացաւն[10]։ * Վասնորոյ եւ 'ի միոջէն ծնանէին. եւ այն՝ 'ի յան-
ցեալ ժամանակի, իբրեւ զաստեղս երկնից բազմութե, եւ իբրեւ

---

[1] Հռով. 8. 24. 25: 2.Կոր. 4. 18: 5. 7: [2] Համար. 39: [3] Ծնն. 1. 1: Սաղ. 32. 6: Յովհ. 1. 3: Եբր. 1. 2: 2.Պետ. 3. 5: [4] Ծնն. 4. 4: 1.Յովհ. 3. 12: Ծնն. 4. 10: Մատ. 23. 35: Եբր. 12. 24: [5] Ծնն. 5. 22. 24: [6] Ծնն. 6. 13. 22: 1.Պետ. 3. 20: Հռով. 3. 22: 4. 13: Փիլ. 3. 9: [7] Ծնն. 12. 1. 4: Գործ. 7. 2. 3.4: [8] Ծնն. 12. 8: 13. 3. 18: 18. 1. 9: Եբր. 6. 17: [9] Եբր. 12. 22: 13. 14: 3. 4: Յայտ. 21. 2. 10: [10] Ծնն. 17. 19: 18. 11. 14: 21. 2: Ղուկ. 1. 36: Հռով. 4. 21: Եբր. 10. 23:

զաւազ առ ափն ծովու աւանց թուոյ [1]։ * Ըստ հաւատոց մեռան 13
ամենեքին սոքա , և չև ևս ընկալեալ զաւետիսն , այլ 'ի հեռուստ
տեսին զնոսա՝ և ցնծացան , և խոստովան եղեն՝ եթէ օտարք
և պանդուխտք են յերկրի [2]։ * Զի որք զայնպիսիսն խօսին , 14
յայտ առնեն՝ եթէ գաւառ իմն խնդրեն [3]։ * Զի եթէ զայն 15
յիշէին ուստի ելինն , գոյր ժամանակ դառնալոյ անդրէն ։ *'
Նա աւանիկ ազնուականի իմն ցանկացեալ են , այսինքն է՝ 16
երկնաւորին . վասն որոյ ոչ ամօթ համարի ա̄ծ՝ կոչել նոցա ա̄ծ .
քանզի պատրաստեաց ն̄ց քաղաք [4]։ * Հաւատովք մատոյց աբ- 17
րահամ 'ի փորձութե̄ իւրում՝ զիսահակ պատարագ . և զմիամօրն
մատուցանէր , որոյ զաւետիսն ընկալեալ էր [5]. * որում ասացաւն , 18
թէ սահակաւ կոչեսցի քեզ զաւակ [6]. * եդ 'ի մտի իւրում, 19
թէ և 'ի մեռելոց կարող է յարուցանել ա̄ծ . ուստի և յառակս
ընկալաւ զնա [7]։ * Հաւատովք՝ վասն հանդերձելոց իրաց օրհնեաց 20
իսահակ զ յակոբ և զեսաւ [8]։ * Հաւատովք յակոբ 'ի մեռանել 21
իւրում զիւրաքանչիւրոք յորդւոցն յովսեփու օրհնեաց , և
երկիր եպագ 'ի ծագ գաւազանի իւրոյ [9]։ * Հաւատովք յովսէփ 22
'ի վախճանել իւրում յիշեաց զելս որդւոցն իսրայէլի , և վասն
ոսկերաց իւրոց պատուիրեաց [10]։ * Հաւատովք՝ զմովսէս իբրև 23
ծնաւ , թաքուցաւ ամիսս երիս 'ի հարց իւրոց , քանզի տեսին
կայտառ զմանուկն , և ոչ զանգիտեցին 'ի հրամանէ թագաւո-
րին [11]։ * Հաւատովք մովսէս իբրև աճեաց՝ ուրացաւ կոչել որդի 24
դստերն փարաւոնի [12]. * լաւ համարեցաւ չարչարել ը̄ ժողովր- 25
դեանն ա̄յ , քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս [13]։ * Կարևոր 26
համարեցաւ զնախատինսն ք̄ի , քան զմեծութի̄ գանձուցն եգիպ-
տացւոց . զի հայեցեալ ակն ունէր վարձուցն հատուցման [14]։ *
Հաւատովք թողոյր զերկիրն եգիպտացւոց , և ոչ երկնչէր 'ի ցաս- 27
մանէ թագաւորին . զի զաներևոյթն իբրև զտեսեալ համբերութբ̄
համարեցաւ [15]։ * Հաւատովք արար զզատիկն և զհեղումն 28
արեանն . զի մի՛ սատակիչ անդրանկացն մերձենայցէ 'ի նս̄ [16]։ *
Հաւատովք անցին ընդ ծովն կարմիր՝ իբրև ընդ ցամաք երկիր . 29
զորոյ զփորձ առեալ եգիպտացւոցն՝ ընկղմեցան [17]։ * Հաւատովք 30

---

[1] Հռով. 4. 19։ Ծն. 22. 17։ Հռով. 4. 18։ [2] Համր. 39։ 27։ Յովհ. 8. 56։ Ծն. 23. 4։ 47. 9։ 1.Մն. 29. 15։ Սաղ. 38. 13։ 118. 19։ 1.Պետ. 1. 17։ 2. 11։ [3] Եբր. 13. 14։ [4] Ել. 3. 6. 15։ Մատ. 22. 32։ Գոր. 7. 32։ Փիլ. 3. 20։ Եբր. 13. 14։ [5] Ծն. 22. 1. 9։ Յակ. 2. 21։ [6] Ծն. 21. 12։ Հռով. 9. 7։ [7] Հռով. 4. 17—21։ [8] Ծն. 27. 27.39։ [9] Ծն. 48. 5. 16. 20։ 47. 31։ [10] Ծն. 50. 24. 25։ Ել.13.19։ [11] Ել. 2. 2։ Գոր. 7. 20։ Ել. 1. 16. 22։ [12] Ել. 2. 10. 11։ [13] Սաղ. 84. 11։ [14] Եբր. 13. 13։ 10. 35։ [15] Ել. 10. 28. 29։ 12. 37; 13. 17. 18։ Համր. 13; [16] Ել. 12. 21; [17] Ել. 14. 22. 29։ [18] Յես. 6. 20։

պարիսպքն Երիքովի անկան, շուրջ եկեալ զնոքօք զեօթն օր[18]: *
31 Հաւատովք Ռախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն,
որոյ ընկալեալ էր զլրտեսսն խաղաղութեամբ[1]:
32 * Եւ արդ՝ զինչ ևս ասացից· զի չէ բաւական ժամանակս
պատմելոյ վասն Գեդէոնի Բարակայ Սամփսոնի Յեփթայայ՝ Դաւ-
33 թի և Սամուէլի և այլոց մարգարէից[2]· * որք հաւատովք պարտեցին
զթագաւորութիւնս· գործեցին զարդարութիւն· հասին աւետեաց·
34 խցին զբերանս առիւծուց[3]· * շիջուցին զզօրութիւն հրոյ· ապրեցան
'ի բերանոյ սրոյ· զօրացան 'ի տկարութենէ· եղեն զօրաւորք 'ի պատ-
35 երազմի· առին զբանակս օտարաց[4]: * Ընկալան կանայք 'ի յարու-
թենէ զմեռեալս իւրեանց· կէսք կոշկոճեցան՝ և չև ևս ընկալեալ
36 զփրկութիւն, զի լաւագոյն յարութեան հասանիցեն[5]: * Եւ կէսք
զտանջանաց և զգանից զփորձ առին, զկապանաց և զբանտից[6]: *
37 Քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան· սպանմամբ սրոյ մեռան·
շրջեցան (լեաշկ մաշկօք՝) և մորթովք այծենեօք· կարօտեալք,
38 նեղեալք, չարչարեալք[7]· * զորս ոչ արժէ աշխարհս· յանապատի
39 մոլորեալք՝ և 'ի լերինս՝ և յայրս՝ և 'ի փապարս երկրի[8]: * Եւ սոքա
ամենեքին վկայեալք 'ի հաւատոյն, չև ևս ընկալան զաւետիսն[9]: *
40 Ա՟Յ վ՟ն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին[10],

---

[1] Յես. 6. 23: Յակ. 2. 25: Յես. 1. 1: [2] Դատ. 6. 11: 4. 6: 13. 24: 11. 1: 12. 7: 1. Թագ. 16. 1. 13: 17. 45: 1. 20: 12. 20: [3] 2. Թագ. 7. 11: Դատ. 14. 5. 6: 1. Թագ. 17. 34. 35: Դան. 6. 22: [4] Դան. 3. 25: 1. Թագ. 20. 1: 3. Թագ. 19. 3: 4. Թագ. 6. 16: 20. 7: Յովէ. 42. 10: Սաղ. 6. 8: Դատ. 15. 8. 15: 1. Թագ. 14. 13: 17. 51. 52: 2. Թագ. 8. 1: [5] 3. Թագ. 17. 22: 4. Թագ. 4. 35: Գործ. 22. 25: [6] Ծնն. 39. 20: Երեմ. 20. 2: 37. 15: [7] 3. Թագ. 21. 13: 2. Մնաց. 24. 21: Գործ. 7. 57: 14. 19: 4. Թագ. 1. 8: Մատ. 3. 4: Զաք. 13. 4: [8] 3. Թագ. 18. 4: 19. 9: [9] Հռովմ. 2: 13: [10] Եբր. 7. 22: 8. 6: 5. 9: 12. 23: Յայ. 6. 11:

Յակոբու Առաքելոյ · Գլ · Դ · 1 · * Ուստի՞ պատերազմունք՝ և ուստի՞ կռիւք 'ի ձեզ · ո՞չ յայսպիսի ցանկութեանց ձերոց՝ որ զօրացեալ են յանդամս ձեր : 2 · * Ցանկանայք՝ և ոչ ունիք · սպանանէք և նախանձիք՝ և ոչ կարէք հասանել · պատերազմիք կռուիք՝ և ոչ ունիք · վասն զի ոչ խնդրէք : 3 · * Խնդրէք՝ և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք · զի անդէն 'ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք : 4 · * Շնացողք՝ ո՞չ գիտէք՝ զի սէր աշխարհիս այսորիկ թշնամութիւն է առ Ա՟Ծ · զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ, թշնամի առնէ զանձն իւր Ա՟Յ : 5 · * Կամ թէ վայրապա՞ր համարիցիք՝ զոր ասէ գիրն · առ նախանձ ինչ՝ որում փափագէ հոգին՝ որ բնակեաց 'ի մեզ, 6 · * տալ զառաւել շնորհսն : վասնորոյ ասէ · տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց :

* Նումրայ մին

Վասն անօրէն ծնողաց. Մխիթար Վարդապետն ինչ է ասել

տես 'ի վայր

---

Բայց թէ որքան ողբոց մեծաց, և արեան արտասուաց արժանիք են այնոքիկ ծնօղք, որք 'ի սկզբան արձակման լեզուի մանկանց իւրեանց՝ անողորմ դաժինձք եղեալ ք հոգւոյ նոցին, դնեն 'ի բերանս նց̅ ծաղր առնել զայլս, կամ անարգել զոք, կամ զանպարկեշտականս բանս բարբառել. և կամ զկատակական խօսս արտաբերել. որովք 'ի ծաղր և 'ի ծիծաղ շարժին լսօղքն. և մինչ խօսի մանուկն զայնպիսիս՝ ուրախանան՝ և համբուրելով զմանուկն՝ խնդան 'ի վր̅ նր̅. և այնու 'ի բնութե̅ նորին ներանկեն զյօժարութի̅ խօսելոյ զբանս ունայնս, և ծաղրականս՝ և անպարկեշտս։ Եւ այսպիսի չարագունեղ սովորութիւնս՝ ո՛չ միայն 'ի մէջ քրիստոնէից, այլև 'ի մէջ հեթանոսաց և կռապաշտից է մեծագունեղ ամօթ, և դատապարտելի։ Եւ սակայն են ոմանք լոկ անուամբ Քրիստոնեայք, որք ոչ միայն ոչ ամաչեն ուսուցանել մանկանց զանպատեհս, այլ նաև յամօթ համարին կրթել զմանկունս իւրեանց 'ի հոգևորական իրս, և 'ի բերանս նց̅ նախապէս դնել զանուն փրկչին մերոյ Յս̅ի Քս̅ի. զորս յամօթ առնելոցէ Քս̅, յորժամ գայցէ փառօք հօր, և ս̅մ հրեշտակօք սրբովք։ Տես երես. 540։ 'ի Մատթէոսի Աւետարանին Տպեալ 'ի Վենէտիկ. 1737։ Մարկ. Ը. 38։ Ղուկ. Թ. 26։ Հռով. Ա. 16։

---

Պարտք ծնողաց

Երկրորդ Օրէնք. Գլ. Դ. 9. * Հայեաց 'ի քեզ և զգուշ լեր անձին քում յոյժ. մի՛ մոռանայցես զամենայն բանս զայսոսիկ՝ զոր տեսին աչք քո. և մի՛ մերժեսցին 'ի սրտէ քումմէ զամենայն աւուրս կենաց քոց. և խելամուտ արասցես որդւոց քոց, և որդւոց որդւոց քոց, 10. * զօրն յորում կայեք դուք 'ի քորէբ առաջի տեառն աստուծոյ ձերոյ յաւուրն եկեղեցւոյ. յորժամ ասաց ցիս տէր, թէ եկեղեցացո առ իս զժողովուրդդ, և լուիցեն զպատգամս իմ զոր ուսուսցին երկնչել յինէն զամենայն աւուրս՝ որչափ կենդանի իցեն դոքա 'ի վերայ երկրի, և ուսուսցեն զորդիս իւրեանց։

Գլ. Զ. 6. * Եւ եղիցին պատգամքս այսոքիկ զոր ես պատուիրեմ քեզ այսօր 'ի սրտի քում և յանձին քում։ 7. * և իմացուսցես զայս որդւոց քոց. և խօսեսցիս սոքօք, 'ի նստել 'ի տան, և 'ի գնալ 'ի ճանապարհի, և 'ի ննջել և 'ի յառնել։ ևս Գլ. ԺԱ. 18. 19։ և ք տես Յեսու. Դ. 21—25։

Յովբ. Գլ. Ա. 5. * Եւ իբրև յանգ ելանէին աւուրք

խրախութեանն, առաքէր յոբ՝ և սրբէր զնոսա. յարուցեալ ընդ-
առաւօտս մատուցանէր վասն նոցա զոհս ըստ թուոյ նոցա, և զուարակ
մի վասն մեղաց ոգւոյ նոցա: քանզի ասէր յոբ՝ թէ գուցէ որդիքն
իմ 'ի միտս իւրեանց իմացան չարութիւն զաստուծոյ: այսպէս առնէր
յոբ զամենայն աւուրս նոցա:

Սաղմոս. ՀԷ. 5. * Հաստատեաց զվկայութիւն իւր առ յակովբ,
և օրէնս եդ 'ի վերայ Իլի: Որինչ միանգամ պատուիրեաց հարցն մերոց,
ցուցանել զայս որդւոց իւրեանց, 6. * զի ծանիցեն յազգ յայլ:
Որդիք որ ծնանիցին յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց իւրեանց.
7. * զի դիցեն առ աստուած զյոյս իւրեանց, և մի' մոռասցին զգործս
աստուծոյ: Զպատուիրանս նորա խնդրելով խնդրեսցեն, 8. * և
մի' եղիցին որպէս և հարք իւրեանց: Ազգ չար և դառնացօղ. ազգ
որ ոչ ուղղեաց զսիրտ իւր և ոչ հաստատեաց առ աստուած զոգի
իւր: Եւ տես Առակաց.13.24:19.18: 23.14: 29.17:

Ղուկաս. ԺԵ.11. * Եւ ասէ. առն միոջ էին երկու որդիք.12. *
ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն. հա՛յր՝ տուր ինձ բաժին, որ անկանի
յընչիցդ. և նա բաժանեաց նոցա զկեանսն:13. * Եւ յետ ոչ բազում
աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հեռի.
և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ:14. * Եւ
իբրև սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և
սկսաւ ինքն չքաւորել:15. * Եւ գնացեալ յարեցաւ 'ի մի ումն
'ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարակ իւր
արածել խոզս:16. * Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերեն
զոր խոզքն ուտէին, և ոչոք տայր նմա: 17. * Եւ եկեալ 'ի միտս
իւր՝ ասէ. քանի՞ վարձկանք իցեն 'ի տան հօր իմոյ հացալիցք, և ես
աստ սովամահ կորնչիմ:18. * Յարուցեալ գնացից առ հայր իմ, և
ասացից ցնա. հայր՝ մեղայ յերկինս, և առաջի քո, 19. * և ոչ ես
եմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց:
20. * Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. և մինչ դեռ հեռագոյն
էր, ետես զնա հայրն՝ և գթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդ առաջ,
անկաւ զպարանոցաւն նորա, և համբուրեաց զնա: 21. * Եւ ասէ
ցնա որդին. հայր՝ մեղայ յերկինս՝ և առաջի քո, ոչ ես եմ արժանի
կոչել որդի քո: 22. * Ասէ հայրն ցծառայս իւր. վաղվաղակի
հանէք զպատմուճանն առաջին, և ագուցէք նմա, և տուք զմատանին
'ի ձեռն նորա, և կօշիկս յոտս նորա.23. * և ածէք զեզն պարարակ՝
զենէք, կերիցուք և ուրախ լիցուք, 24. * զի այս որդի իմ մեռեալ
էր՝ և եկաց, կորուսեալ էր՝ և գտաւ. և սկսան ուրախ լինել:

Պարտիս զաւակաց. տես 'ի կալկաթայ տպեալ նումրայ տասներկու
տետրակի երես երեսունումն:

* Նումրայ երկու
Վասն կիրակի Օրն սուրբ պահելն
տես 'ի վայր

---

Կիրակի օրն սուրբ պահելէ համար պատուէր և օրինակներ

Ելք ·16· 22· * Եւ եղեւ յաւուրն վեցերորդի ժողովեցին զպէտ-
սն (մանանայն) կրկին՝ երկուս չափս առ մի մի։ և մտին ամ իշխանք
ժողովրդեանն և պատմեցին Մովսիսի։ 23· * Ասէ ցնոսա Մովսէս.
այս բանն է զոր խօսեցաւ Տէր։ Շաբաթ հանգիստ՝ սուրբ Տեառն վա-
ղիւ։ որ ինչ եփելոց էք՝ եփեցէք, և որ ինչ հասուցանելոց էք՝ հասու-
ցէք. և զամ զաւելորդն թողուցուք յամանս մինչև ցառաւօտ[1]։ 24.
* Եւ թողին 'ի նմանէ յայգ. որպէս հրամայեաց նոցա Մովսէս.
և ոչ նեխեցաւ, և ոչ եղեւ 'ի նմա որդն[2]։

Չորրորդ Պատգամ

Ելք ·20·8· * Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա[3]։ 9· * զվեց
օր գործեսցես, և արասցես զամ գործս քո[4]։ 10· * յաւուրն
եւթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քում, մի՛ գործեսցես 'ի նմա
զամ գործ քո դու և ուստր քո և դուստր քո, ծառայ քո, և
աղախին քո. եզն քո և էշ քո, և ամ անասուն քո. և եկն քո և
պանդուխտն քո որ 'ի քեզ[5]։ 11· * Զի զվեց օր արար Տէր Աստուած
զերկինս և զերկիր, և զծով և զամենայն որ 'ի նոսա, և հանգեաւ
յաւուրն եւթներորդի. վասն այնորիկ օրհնեաց Տէր զօրն եւթն-
երորդ, և սրբեաց զնա[6]։

Նէեմայ ·13· 15· * Յաւուրսն յայնոսիկ տեսանէի 'ի Հրէաստանի
զի հարկանէին հնձանս յաւուր շաբաթու, և բերէին զորայսն ընդ-
դրունս Երուսաղէմի. և կախէին բեռն գրաստուց զգինի և զխաղող
և զթուզ. բարձեալ բեռինս բերէին յԵրուսաղէմ յաւուր շաբա-
թու։ և կալեալ վկայս զի վաճառէին յաւուր շաբաթու[7]·16· * և
Նստէին 'ի տեղի վաճառուցն որք բերէին զձուկնն և զամ վաճառսն,
և գնէին յաւուր շաբաթու հրէայքն 'ի ներքս յԵրուսաղէմ։ 17· *
Եւ կագեցայ ես ընդ որդիս հրէից որք էին յԵրուսաղէմ, և ընդ
իշխանսն յուդայ, և ասեմ ցնոսա. զի՞նչ է անօրէնութիւնս այս
զոր դուք գործէք՝ և պղծէք զաւուրս սուրբ զշաբաթու[8]։ 18· *
ո՞չ այսպէս արարին հարքն ձեր՝ և ած 'ի վ̃ր նոցա Աստուած զչարիսս

---

[1] Ծն. 2. 3: Ելք. 20. 8: 31. 15: 35. 3: Ղևտ. 23. 3: [2] Ելք. 16. 20: [3] Ելք. 31. 13. 14: Ղևտ. 19. 3. 30: 26. 2: 2. Օրէ. 5. 12: [4] Ելք. 23. 12: 31. 15: 34. 21: Ղևտ. 23. 3: Եզե. 20. 12: Ղու. 13. 14: [5] Ծն. 2. 2. 3: Ելք. 16. 26: 31. 15: Նէէ. 13. 16—19; [6] Ծն. 2. 2: [7] Ելք. 20. 10: Եզե. 17. 21, 22: Նէէ. 10. 31: [8] Նէէ. 13. 11:

զայս չար, և ՚ի վերայ քաղաքիս այսորիկ. և արդ՝ դուք ընդէ՞ր յաւ-
ելուք զբարկութիւն ՚ի վերայ Իսրայէլի, և պղծէք զօրն սուրբ
շաբաթուց [1]։
19. * Եւ եղև յորժամ կանգնեցի զդրունս Երուսաղէ-
մի՝ յառաջքան զշաբաթն հրամայէի փակել զդրունսն, և ոչ տայի
բանալ զնոսա մինչև անցանէր շաբաթն։ և դարձեալ կացուցի ման-
կունս պահապանս, զի մի՛ իշխեսցէ մտանել ոք բեռամբ յաւուր
շաբաթու ընդ դրունսն Երուսաղէմի [2]։
20։ * Եւ ագանէին ամենեք-
եան որք վաճառէին՝ արտաքոյ Երուսաղէմի միանգամ և երկիցս։
21. * Եւ ասեմ ցնոսա, ընդէ՞ր ագանիք դուք արտաքոյ պարսպիդ.
եթէ այլ տեսանեմ զանօրէնութիւնդ զայդ՝ տամ հրաման այսպէս
զի ոչ մտանիցէք դուք ՚ի շաբաթս մեր՝ և ՚ի քաղաքս։
22. * Եւ
ասեմ ցղևտացիսն որք էին սրբեալ, և գային պահէին զդրունսն,
և սրբէին յաւուր շաբաթու. և յայնմ հետէ ոչ պղծեցին
զշաբաթսն։ Եւ յայսմ չափի յիշեսցէ զիս Տէր՝ և խնայեսցէ յիս
ըստ բազում ողորմութեան իւրում [3]։

Եսայի. 58. 13. * Եթէ դարձուսցես զոտն քո չառնել զկամս
քո յաւուրն սրբութեան. և կոչեսցեն զշաբաթսն փափուկս նուիր-
եալս աստուծոյ, և փառաւորեալս։ և ոչ փոխեսցես զոտն քո ՚ի գործ,
և ոչ խօսեսցիս բան ինչ բարկութեան բերանով քով [4].
14. * և եղիցես
յուսացեալ ՚ի տէր։ Եւ տարցի զքեզ ՚ի բարութիւնս երկրին, և
ջամբեսցէ քեզ զժառանգութիւն Յակովբայ հօր քո. զի բերան
տեառն խօսեցաւ զայս [5]։ Այս երկու խօսքն ինչ կերպով հետ համեմատէք
թէ ընկալան էն յիշածէ։

Մատթէոսէ. Գլ. 12. 9. * Եւ գնացեալ անտի յիսուս եկն
՚ի ժողովուրդն նոցա [6]։
10. * Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր
գօսացեալ էր. հարցին ցնա՝ և ասեն, եթէ պա՞րտ իցէ ՚ի շաբաթու
բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ [7]։
11. * Եւ նա ասէ ցնոսա. ո՞վ է
՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ՚ի խորխորատ
՚ի շաբաթու. միթէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ զնա [8]։
12։ * Իսկ
արդ՝ ո՞րչափ ևս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է
՚ի շաբաթու բարիս գործել։
13. * Յայնժամ ասէ ցայրն. ձգեա
զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ իբրև զմիւսն։
14. * Իսկ
փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ ո՞րպէս
կորուսցեն զնա [9]։

---

[1] Երե. 17. 21—23: [2] Ղևտ. 23. 32: Երե. 17. 21. 22: [3] Եզե. 12. 30: 13. 14. 31:
[4] Եսա. 56. 2: [5] Յովբ. 22. 26: 2.Օրէ. 32. 13: 33. 29: Եսա. 1. 20: 40. 5: Միք. 4. 4:
[6] Մար. 3. 1: Ղուկ. 6. 6: [7] Ղուկ. 13. 14: 14. 3: Յովհ. 9. 16: [8] Ելք. 23. 4. 5:
2.Օրէ. 22. 4: [9] Մատ. 27. 1: Մար. 3. 6: Ղուկ. 6. 11: Յովհ. 5. 18: 10. 39: 11. 53:

‡. Նումրայ երեք

Վասն յանցանաց. Գրիգոր Նարեկացին ինչ է գրեր

տես 'ի վայր

---

Վերստին յաւելուած չչին հեծութեան
Նորին հոգւոյ առ նոյն աղերս ծաղկանաց:
Բան 'ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

ԲԱՆ. Հ:

Եւ քանզի համբարձեալ զընթացս բանիս 'ի փոքունց աստի երկրայնոց չհամարելոց ընդ գոյս եղելոց 'ի մեծագունիցն տեսակս, ասացից զտանելի հանդէս իրաւանց ահաւորիդ անաչառութեան: Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն աստուծոյդ՝ իբրև զնախածանօթ նահապետութիւնսն. և կամ մաքրագոյնք՝ որպէս զմարգարէսն. կամ անբծագոյնք՝ իբրև զառաքեալսն. կամ ընտրելագոյնք՝ որպէս զմարտիրոսսն: Եթէ դու ոչ մարդասիրեսցես անըղաւ բարիդ և անփոփոխ խնամակալութիւնդ և անպակաս ողորմութիւնդ, ընդունայն է ինձ փրկութիւնն առ 'ի նոցանէ:

Զի թէ առնոյն ինքն աբրահամ ձայն արձակիցեմ իբր ողորմագին, զառակ ընչեղին ինձ վարդապետէ. 'ի տապոյ անտի պապակեալ. կաթիլ մի ջրոյ ոչ բաւականանայ. քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հասարակաց անհնարութեան: Ղուկ. 16. 24: իսկ եթէ առ մովսէս, և նա զգածեալ է տկարութեամբ. որ ոչ զօրեաց առնն փրկութեան, որ զհայթայթանաց կրկուոն 'ի պահպանութեանն աւուր ժողովէր. Թւոց. 15. 32: իսկ եթէ առ ահարոն, նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի. Ելից. 32. 21: իսկ եթէ առ դաւիթ, 'ի մէջ բարեացն առաւելութեան՝ ըստգտեալ է և նա. Բ. Թագ. 12. 7: իսկ եթէ առ նոյ՝ և յոբ՝ և դանիէլ, զայս եղեկիէլ մարգարէ մեկնեաց՝ յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա. Եզեկ. 14. 14. 20: և զայն ընդ նոսին իբր 'ի դիմաց աստուծոյ ազդեալ. կենդանի եմ ես ասէ տէր՝ եթէ ոչ ապրեցուսցեն զուստերս և զդստերս իւրեանց 'ի բարկութենէն որ հասանիցէ. բայց եթէ ինքեանք միայն ապրեսցեն: իսկ եթէ առ պետրոս վէմն հաւատոյ, 'ի քումդ խնամոց խուն մի խիթացեալ՝ և նա ընդ կրիւք իմն գըրաւեցաւ. Մարկ. 14. 71: Թողում ասել զբազմացն գումարութիւն խոնարհեալ առ կարիս, թէ և յաւէտ երջանիկք իցեն. Բ. Մնաց. 32. 25: Ընդորս և յոլովաւ ոմն մարգարէի 'ի մէջ ածաւաքն սպասաւորութեան՝ մարդկօրէնն գայթակղութիւն՝ միոյ յոլովից անթարգմանելի, թէ և 'ի դէմս իմն մեկնութե ձևակերպեսցի. Գ. Թագ. 13. 1: Սերաք. 2. 22:

Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութի փրկութե մարդկան . և ցուցան նոքա ողորմեալք բարերարիդ, և զօրացեալք ամենակալիդ։ Զ. Թագ. 24. 13։ Կոչեցեալք պաշտպանողիդ, և քաւեցեալք հնարաւորիդ։ Շնորհեալք ազատեցուցչիդ, և բժշկեալք անախտականիդ։ կենագործեալք անապականիդ, և լուսաւորեալք նորոգողիդ։

Այսուհետև գիտացեալ զաակն որքանութեանց հողածին բնութեանս, որք մխիթարեն օրինակաւ նմանաբար հարազատապէս վհատութե յուսահատելոց, ահա աւ քեզ դիմեցից որդի աստուծոյ կենդանւոյ քրիստոս օրհնեալ յամենայնի։ Մանաւանդ զաւակն ազգակից այսմ մաղթանաց ստանօր յիշել, զվերագրեցելոյդ բան՝ վերստին արդարացուցանէ։ Բարի է լոտ իմաստնոյ ումեմն երջանկի՝ անկանիլ ՚ի ձեռս տեառն, և մի՛ ՚ի ձեռս մարդկան։ զի որպէս մեծութիւն նորա, և ողորմութիւն նորին։ Եւ այս բան՝ թէ և զդաւթին իմն գծագրէր, որ զերեք մասեան հարուածն աստուածեան աւաջի եդեալ՝ ընտրեաց ինքն կամաւորաբար զդատակնիք մահուն սատակման . իբր զկենդանի քրիստոսի հաւատոյն յաճախութեամբ . քան զերկուսն ևս այլ փոքրկունս՝ որք տանջենն և ոչ ողորմին։ Սակայն և իմս օրինակութիւն բանիս պատկերի ճարակեցելոյ՝ հնարս կենաց կորուսելոյս անձին ոչ այլայլեալ յարմարութենէ։ Զի ոչ եթէ զփրկեալսն նըւաստացուցանեմ ՚ի մասենիս այսր ողբերգութեան, (առանց որոյ ոչ է հաղթել առ տէր *) այլ զփրկողին անուն պսակեմ, և զշնորհն նորին՝ առ ամենեսին բարեհռչակեմ. և զբնաւին բարձունսն ՚ի թուիչս վարուց՝ խոստովանիմ . բանիս պայմանաւ յաւէտ կարօտիմ ողորմութենն դեղոյ։

Ահա դու կեանք։ . Յովհաննու . 11. 25։
Դու փրկութիւն։ . Մատթէոսի . 1. 21։
Դու բժշկութիւն։ . Մատթէոսի . 14. 35. 36։
Դու անմահութիւն։ . Յովհաննու . 6. 40։
Դու երանութիւն։ . Յովհաննու . 20. 29։ 1. Պետ. 1. 8։
Դու լուսաւորութիւն։ Յովհաննու . 8. 12։ 1. 9։

Արդ ինձ անդորր ՚ի մեղացս աշխատութեանց . զի և քեզ լիցի հանգիստ ՚ի մշտադատ հեծութեանց ձանձրացուցիչս թախանձանաց։ Որ ոչ այլ իւիք՝ քան թէ փրկութեամբ մարդկան պարարիս։ Օրհնեալ յաւիտեանս ամէն։

Տես ՚ի Գիրս Աղօթից արարեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ . տպեալ ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի Տպարանի յօհաննէսի և պօղոսի .1782։

---

* Առանց որոյ ոչ է հաւչել, [illegible] առանց միջնորդութեան սորա։ Բայց զայս իմա ոչ բացարձակապէս և առհասարակ յաղագս ամ՟

---

Կոստանդնուպօլսոյ տպեալ նարեկումն է ‘հաղթել’ և Վենետիկոյ տպեալ նարեկումն է ‘հաւչել’ տես վերոյ տպեալ օրինակաձեւէն։

բարեաց՝ զոր յա՟յ ընդունելոց եմք . զի այսպիսի բացարձակ և ընդհանրական միջնորդ՝ մի միայն է յս՟ քս՟ տէր մեր †: Այլ իմա զհամարձակ մատչելոյն առ ա՟ծ . զի ս՟ցն արժանաւորութիւն և համարձակութիւն՝ տայ մեզ առաւել վստահութեամբ մատչել առ ա՟ծ . այլ և ըստ տուչութեան մասնաւոր բարեաց՝ զորս ա՟ծ սահմանեալ է շնորհել մեզ բարեխօսութեամբ ս՟ց : Որպէս բարեկամացն յոբայ սահմանեալ էր տալ թողութիւն աղօթիւք յոբայ : Յոբ . 42. 8: ‡ տես երես . 357. կամ լուծմունք 'ի ԲԱՆ. Հ. համար .12: 'ի Նարեկ Աղօթից լուծմամբք եա՟ երկրորդ անգամ յաւելուածով եա՟ տպեալ 'ի Վենետիկ .1827: և Հայոց . ումհզ :

† . Միջնորդ կենդանի ասի Քս՟ . ոչ ըստորում կեանք է ըստ ինքեան՝ այլև մեզ լինի պատճառ կենաց . ըստ այնմ կենդանի առնել համօրէն կարող է զմատուցեալսն նովաւ առ Ա՟ծ . քանզի միշտ կենդանի է լինել բարեխօս վասն նոցա : § Եբր . Է . 25: տես երես . 290. 'ի Գիրք Մեկնութեան Աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ . տպեալ 'ի կոստանդնուպօլիս քաղաքի .1745: և Հայոց . ուճլդ :

§ Հռովմայեցւոց .8.34. * իսկ արդ՝ ո՞վ է որ դատապարտ առնիցէ : Քս՟ յս՟ որ մեռաւն մանաւանդ թէ յարուցեալ իսկ է . և է ընդ աջմէ ա՟յ . (Մրկ .16.19) որ և բարեխօս իսկ է վասն մեր :

1. Տիմոթէոս . 2.5. * Զի մի է ա՟ծ , և մի միջնորդ ա՟յ և մարդկան՝ մարդ յս՟ քս՟ . 6. * որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն՝ վկայութիւն ժամանակաց իւրոց :

Եբրայեցւոց . 9.15. * Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ . զի յորժամ մահ լինիցի 'ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցանաց , զաւետիս առցեն հրաւիրեալքն 'ի ժառանգութ՟ի յաւիտենից : 24. * Զի ոչ եթէ 'ի ձեռագործ սրբութիւնսն եմուտ քս՟ յօրինակս ճշմարտութեանն . այլ 'ի բուն իսկ յերկինս , յանդիման լինել երեսացն աստուծոյ վասն մեր :

1. Յովհաննու . 2.1. * Որդեակք իմ , զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք , և եթէ մեղիցէ ոք , ունիմք բարեխօս առ ա՟ծ զյս՟ քս՟ զարդարն՝ և զանարատ , 2. * Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց . և ոչ եթէ մերոցն միայն՝ այլ և ամենայն աշխարհի :

‡ . Վերոյ տպեալ մեկնութիւնումն որ գրածէ ' որպէս բարեկամացն յոբայ սահմանեալ էր տալ թողութիւն աղօթիւք յոբայ : եա՟' այս գրութեամբքն ոչինչ չի հաստատվում որ յանգուցեալ արդար հոգիքն քինչ այժմ էն կենքումն են բնակած . նոքա կարողէն այս կենաց բնակողաց ք՟ մեք որ այժմ կենդանի եմք . մեր աղօթքներն լսեն՝ և մեզ համար բարեխօս լինեն . որպէս որ մեր փրկիչ Յս՟ն կարողէ : ( Վս՟ զի Յս՟ Քրիստոս Տէր Ա՟ծ է և Մարդ է ) իւր Ա՟ծութեամբն ինքն ամենայնգէտ է և ամենայներկայ է . սուրբերն այսպէս չեն : և սուրբ Աւետարանովն պարզ երևումէ . որ Հայրն Ա՟ծ մի միայն իւր

միածին և սիրելի որդւոյն է միջնորդ կարդել · որ մեզ մեղաւորացս համար բարեխօս լինի · էլ ոչում չի կարդել · և էլ ոչ մին սուրբ կարող չէ բարեխօս լինի ինչ պէս Քն :

Վերևումն որ վասն Յոբայ գրածէ · Նորայ մեկնութիւնն այսէ · ԱՅ Հրեշտակաց մօտ Յոբայ համար սատանին ասաւ ՙՆայեցա՞ր միտք քո՛վք ընդ ծառայ իմ ընդ յոբ · զի ոչ գոյ իբրև զնա 'ի վերայ երկրի, այր անարատ՝ ճշմարիտ՝ աստուածապաշտ՝ մեկնեալ յամ իրաց չարաց : Յոբ ·1·8: յետ այսու բազում փորձս կրեաց Յոբ · և բազում տխրութիւնս · և 'ի մէջ իւր անմխիթար կեցութեանն ասաց ՙՄերկ իսկ եկի ես յորովայնէ մօր իմոյ, և մերկանդամ դարձայց անդրէն : * Տէր ետ՝ և տէր առ · որպէս տեառն հաճոյ թուեցաւ՝ նոյնպէս և եղև · եղիցի անուն տեառն օրհնեալ : * Եւ յայսմ ամենայնի անցս որ անցին ընդ նա՝ ոչ մեղաւ յոբ առաջի տեառն, և ոչ ետ անզգամութիւն այ: Յովբ ·1·21—23: կրկին անգամ

Եւ ասէ տէր ցսատանայ · ապաքէն հայեցա՞ր ընդ ծառայ իմ ընդ յոբ · զի ոչ գոյ իբրև զնա 'ի վերայ երկրի, այր ճշմարիտ անարատ, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն չարութենէ · և տակաւին կայ յանմեղութեան · և դու տարապարտ խօսեցար կորուսանել զինչս նորա: Յովբ · 2· 3: ահա այսպէս գովելի · և ԱՅ գոված Յոբին · իւր երեք բարեկամներին մխիթարելոյ ածիլ · անգիտութեամբ մեղադրեցին: վասն որոյ բարերարն ԱՅ եղեփազ թեմնացուն պարզ ցույց տվեց և ասաց :

Մեղար դու, և երկոքին բարեկամք քո · զի ոչ խօսեցարուք առաջի իմ ճշմարիտ, և ոչ ինչ իբրև զծառայ իմ զյոբ: * Բայց արդ առէք զուարակս եւթն և խոյս եւթն †, և երթայք առ ծառայ իմ յոբ · և արասցէ ողջակէզս վասն ձեր · և յոբ ծառայ իմ արասցէ աղօթս վասն ձեր: Զի թէ ոչ նմա ակն առեալ էր, և եթէ ոչ վասն նորա էր, կորուսեալ էր իմ արդեօք զձեզ ‡· զի ոչ խօսեցարուք ճշմարտութիւն զծառայէ իմմէ զյոբայ: * Եւ գնաց եղիփազ թեմնացի, և բաղդատ սաւքեցի, և սովփար մինեցի · և արարին որպէս հրամայեաց նոցա տէր · և եթող զմեղս նոցա վասն յոբայ: Յովբ · 42· 7—9: †· ղըրօղինաչ ‡· Թիւ · 23·1·2: ‡ Գոր · 27· 24: §

Եւս եթէ որ մենք լաւ միտք մուծ անենք սուրբ Գիրքն · անդ կսեմնենք որ վասն Յովբայ այսպէս է գրած · § Ծնն ·18· 32:

Այր մին էր յաւսիդ աշխարհի որուն անուն էր յոբ : և էր այրն այն ճշմարիտ, անարատ, արդար, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարութենէ մեղաց: Եւ

Միաբանեալ գային որդիք նորա առ միմեանս, առնէին խրախութի զօրհանապազ · Եւ իբրև յանգ ելանէին աւուրք խրախութեանն, առաքէր յոբ՝ և սրբէր զնոսա · յարուցեալ ընդ առաւօտս մատուցանէր վասն նոցա զոհս ըստ թուոյ նոցա, և զուարակ մի վասն մեղաց ոգւոյ նոցա: քանզի ասէր յոբ՝ թէ գուցէ որդիքն իմ

'ի միտս իւրեանց իմացան չարութիւն զա̃յ: այսպէս առնէր յոբ զամենայն
աւուրս նոյա: Յովբ. 1. 1. 4. 5: ահա սովաւ երեւումէ որ Յոբ ոչ
թէ միայն արդարէր. այլ թէ Ք̃ահապետ ևս էր. և իւրան երեխաների
սրբութեան. և մեղաց համար զոհ կըմատուցանէր ԱԾ: ուրեմն Յոբ
գիտէր վասն սրբութեան. և վասն մեղաց զոհ մատուցանելն ԱԾ.
և աղօթք անելն առ ԱԾ: վասն որոյ նախ ԱԾ Յոբայ երեք բարեկա-
մացն ասաց որ իւրեանք սղալէն. և մեղան. վասն զի Յոբն անմեղէր:
և յետ այնու ասաց և պատուիրեց որ մեծ հորթ. և ոչխարներ տանեն
Յոբ զոհ կմատուցանէ. և իւրեանց մեղաց համար ևս աղօթք կանէ †:
և նոքա արարին որպէս հրամայեաց նոցա Տէր ՙ երթ նախ հաշտեաց
ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո:'

†. Զոր Օրինակ

Ծննդ. 20. 7. արձակեա զկինդ յայր իւր. զի այր մարգարէ է, և
արասցէ աղօթս վասն քո և կեցցես: ապա թէ ոչ տացես, գիտեա զի
մեռանիս դու և ամենայն որ ինչ քո է: 17. * Եւ եկաց յաղօթս
աբրաամ առ ա̃ծ. և բժշկեաց զաբիմելէք և զկին նորա, և
զաղախնայս նորա, և ծնանէին:

Ելք. 18. 12. * Եւ առ յոթոր աներն մովսիսի ողջակէզս և զոհս
ա̃յ: և գնացին մովսէս և ահարոն և ամենայն ծերքն իսրայէլի՝ ու-
տել հաց ընդ աներոյն մովսիսի առաջի տեառն:

Գործք Առաքելոց. Գլ. 12. 5. * Եւ պետրոս 'ի պահեստի էր
'ի բանտին. և աղօթք ստէպ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ ա̃ծ:
6. * Իբրև կամեցաւ զնա ածել հերովդէս. 'ի գիշերին յայնմիկ էր
պետրոս 'ի քուն 'ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք.
և պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն: 7. * Եւ ահա
հրեշտակ տեառն եկն եկաց 'ի վերայ՝ և լոյս ծագեաց 'ի տանն, և
խթեաց զկողն պետրոսի՝ յարոյց զնա՝ և ասէ. արի վաղվաղակի.
և անկան շղթայքն 'ի ձեռաց նորա: 8. * Եւ ասէ հրեշտակն ցնա.
ած զգօտի քո, և արկ զհողաթափս յոտս քո. և արար այնպէս:
և ասէ ցնա, արկ զձորձս քո՝ և եկ զկնի իմ: 9. * Եւ ելեալ
երթայր զհետ, և ոչ գիտէր՝ թէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեն
'ի հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել: ևա̃ ևա̃ 12. * Եւ լեալ
'ի միտս՝ եկն 'ի տուն մարեմու մօր յովհաննու, որ կոչեցաւն մարկոս.
ուր էին բազումք ժողովեալ՝ և աղօթս առնէին:

Եփեսացւոց. 6. 18. * ամենայն աղօթիւք և խնդրուածովք՝ աղօթս
առնել յամենայն ժամանակի հոգւով: և 'ի նոյն տքնիջիք ամենայն
ժուժկալութեամբ և խնդրուածովք՝ վասն ամենայն սրբոց, 19. *
Եւ վասն իմ. զի ինձ տացի բան 'ի բանալ բերանոյ իմոյ. համարձա-
կութեամբ ցուցանել զխորհուրդ աւետարանին. 20. * վա̃յ պատգա-
մաւորիմ կապանօքս. զի նովին համարձակեցայց, որպէս և պարտ իցէ
ինձ խօսել: աստ Առաքեալն խնդրումէ իւրան համար աղօթք ընեն

Կողոսացւոց. 4. 2. * Աղօթից սպէպ կացէք. տքնել 'ի նմին գոհութեամբ: 3. * Աղօթս արարէք միանգամայն և վասն մեր. զի Աստուած բացցէ մեզ դուռն բանին, խօսել զխորհուրդն քրի, վասն որոյ և կապեալս կամ. 4. * զի յայտնի արարից զնա որպէս արժան իցէ ինձ խօսել: աստ Առաքեալն խնդրումն իւրանց համար աղօթք ընէն

2. Թեսաղոնիկեցւոց. 3. 1. * Այսուհետև եղբարք՝ աղօթս արարէք 'ի վերայ մեր, զի բանն տեառն ընթասցի. և փառաւոր լինիցի յամենայն տեղիս՝ որպէս և առ ձեզ. 2. * զի ապրեսցուք յանօրինաց և յանզգամաց մարդոց. զի ոչ ամենեցուն են հաւատք:

1. Տիմոթէոս. 2. 1. * Եւ արդ՝ աղաչեմ, նախ քան զամենայն առնել աղօթս՝ խնդրուածս՝ պաղատանս՝ գոհութիւնս վասն ամենայն մարդկան. 2. * մանաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց. զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն աստուածպաշտութեամբ և սրբութեամբ: 3. * Զի այնէ բարի և ընդունելի առաջի փրկչին մերոյ աստուծոյ. 4. * որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն՝ և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն:

Հին և Նոր Կտակարանումն պարզ գրածէ. որպէս որ փոքր ինչ օրինակվէց և վերևն տպվեց. ապա Ած հրամայելայ որ մեք մեզ համար աղօթք անեմք. վասն մեր ընտանեացն. վասն մեր բարեկամացն. վասն մեր չարեկամացն աղօթք անեմք: վն անհաւատից. վասն իշխանաց. վասն թագաւորաց օղօթք անեմք: միայնակ. և կամ միմեանց հետ 'ի միասին աղօթք անեմք: ապա մեք որ կենդանի եմք. և դեռ էս կենքումն եմք բնակած հոգւով և մարմնով. այս կենքումն հոգւով և մարմնով բնակեալ. ապա կենդանի անձանց համար աղօթք անեմք: էս հրամանն. պատուէրն. և օրինակներն Ածաշնչումն կայ գրած. որպէս մասն ինչ օրինակեալ վերևն տպվեց: ապա էս կենքիցն ում ում հոգիքն որ մարմնոցն բաժանվել են. և մեռաւոր են գնացել էն կենքն. նոցա մեռաց թողութեան համար: ապա մեռաւոր հանգուցեալ հոգւոց համար. Հին և Նոր Կտակարանումն ոչինչ մինուեղ հրաման. պատուէր. և կամ օրինակ չկայ որ մենք աղօթք անեմք: տես

Ասէ Յիսուս փրկիչն մեր. ՙեկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ 'ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորայ, * և եկեսցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց. և որոց զչար արարեալ իցէ՝ 'ի յարութիւն դատաստանից:՚ Յովհաննու. 5. 28. 29: Մատ. 25. 35: Դան. 12. 2: Վերայ ասէ Առաքեալն Պօղոս

Հռովմայեցւոց. 14. 12. * Ապա ուրեմն՝ իւրաքանչիւրոք 'ի մէնջ ընդ անձին համարս տացէ այ. Եւս ասէ

2. Կորնթացւոց. 5. 10. * Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին քրի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի, և եթէ չար:

Էս մասին տես Նումրայ. 17. թերթակի երես. 33—36. ում:

1 Գլ. Զ. Իշխէ ոք 'ի ձէնջ՝ եթէ իրք ինչ իցեն ը՟ ընկերի
2 իւրում, դատել առաջի անիրաւաց՝ և ո՛չ առաջի սրբոց: * Եթէ
ո՞չ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դատին. և եթէ ձեօք դատի
3 աշխարհ՝ ապա ո՛չ էք արժանի անարգ ատենից: * Ո՞չ գիտէք եթէ
4 զհրեշտակս դատիմք, թո՛ղ թէ զերկրաւորս: * Զերկրաւոր
ատեանս եթէ յանձն առնուցուք, զանարգսն եկեղեցւոյ դատաւորս
5 նստուցէք: * Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այնչափ ո՛չ գոյ ոք իմաս-
տուն 'ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել 'ի մէջ եղբօր իւրոյ:
6 * Այլ եղբայր ընդ եղբօր դատի, և զայն՝ 'ի մէջ անհաւատից: *
7 Եւ արդ՝ ամենևին իսկ վասթարութիւն է 'ի ձեզ, զի դատաստանս
իսկ գոն 'ի միջի ձերում. ընդէ՞ր ո՛չ դուք զրկիք, և ո՛չ դուք
8 առաւել նեղիք: * Այլ դուք զրկէք և նեղէք, և այդ՝ զեղբարս
9 ես: * Եթէ ո՞չ գիտէք՝ զի անիրաւք զարքայութիւն այ ո՛չ ժա-
ռանգեն. մի՛ խաբիք՝ ո՛չ պոռնիկք, ո՛չ կռապաշտք, ո՛չ շունք[1],
10 * ո՛չ իգացեալք, ո՛չ արուագէտք, ո՛չ գողք, ո՛չ ագահք, ո՛չ
արբեցողք, ո՛չ բամբասողք և ո՛չ յափշտակողք՝ զարքայութիւն այ
11 ո՛չ ժառանգեն: * Եւ դուք այնպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք՝
այլ սրբեցարուք՝ այլ արդարացարուք յանուն տն մերոյ յի քի,
և 'ի հոգին այ մերոյ: [1]1.Կոր.15.50: Գաղ.5.21: Եփե.5.5: 1.Տիմ.1.9: Եբր.12.
12 * Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ ո՛չ ամ ինչ օգուտ է.
ամ ինչ ինձ մարթ է, այլ ո՛չ եթէ ես ը՟ իշխանութը՟ ուրուք
13 լինիցիմ[2]: * Կերակուր որովայնի, և որովայն կերակրոյ. այլ ած
զսա և զնա խափանեսցէ. բայց մարմին ո՛չ պոռնկութեան՝ այլ տն,
14 և տր մարմնոյ: * Այլ ած՝ որ և զտրն յարոյց, և զձեզ յար-
15 ուսցէ զօրութը՟ իւրով: * Ո՞չ գիտէք՝ եթէ մարմինք ձեր
անդամք են քի. արդ՝ առեալ զանդամս քի, առնիցեմ անդամս
16 պոռնկի՞. քա՛ւ լիցի[3]: * Եթէ ո՞չ գիտէք՝ զի որ մերձենայ 'ի պոռ-
17 նիկ՝ մի մարմին է. եղիցին, ասէ, երկոքին 'ի մարմին մի[4]: * Եւ
18 որ մերձենայ 'ի տր՝ մի հոգի է[5]: * Փախերո՛ւք 'ի պոռնկութէ:
Զամ մեղս՝ զոր և գործէ մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է.
19 իսկ որ պոռնկին՝ յիւր մարմինն մեղանչէ[6]: * Եթէ ո՞չ գիտէք
զի մարմինք ձեր տաճար են հոգւոյն սբ՟յ՝ որ է 'ի ձեզ՝ զոր ունիք
20 յայ. և չէք անձանց տէր[7]: * Քանզի գնոց գնեցայք. փառաւո՛ր
արարէք զած 'ի մարմինս ձեր և յոգիս, որ է այ:

---

14: 13.4: Յայտ.22.15: [2]1.Կոր.10.23: [3]Հռով.12.5: 1.Կոր.12.27: Եփե.4.12—16: 5.30: [4]Ծնն.2.24: Մատ.19.5: Եփե.5.31: [5]Յովհ.17.21—23: Եփե.4.4: 5.30: [6]Հռով.6.12. 13: Եբր.13.4: Հռով.1.24: 1.Թես.4.3: [7]1.Կոր.3.16: 2.Կոր.6.16: Հռով.14.7.8:

---

CALCUTTA: PRINTED AT THE BAPTIST MISSION PRESS, FOR THE AMERICAN RELIGIOUS TRACT SOCIETY.
1st Ed.] 1841. [1000 Copies.

## The Books called Apocryphal.

Գիրք անյայտք կամ անկանոնք են ըստ Անգղիական Թարգմանութեան

| | | |
|---|---|---|
| 1. Եզրաս * - - - - 9 | Իմաստութիւն - - - - 16 | Պատմութիւն Շուշանայ |
| 2. Եզրաս † - - - - 16 | Եկեղեսիաստիկոս - - - 51 | Բէլ Կուռքն և Վիշապն |
| Տովբիթ - - - - - - 14 | Բարուք հանդերձ - - . | Աղօթք Մանասէի |
| Յուդիթ - - - - - - 16 | Թղթովն Երեմիայի - - 6 | Առաջին Մակաբայեցւոց 16 |
| Մնացորդ Եսթերի ‡ - - 6 | Երգ Երից Մանկանց - - . | Երկրորդ Մակաբայեցւոց 15 |

և Երրորդ Մակաբայեցւոց

* որ է Լատինացւոց Եզրաս Երրորդ ։ և Հայոց Եզրաս Առաջին ։
† որ է Հայոց Եզրաս Չորրորդ ։ ‡ որ է Հայոց Եսթերի 10. Գլխոյ 4. համարէն մինչև ի ․16. Գլխոյ վերջն ։

Հայոց Հին Կտակարանն երկու Սաղմոս Տան ունի ։ և ․113. Սաղմոսն ․ Երկու Սաղմոսէ ։ և և ․ 114. Սաղմոսն մին Սաղմոսէ ․ Երկու Սաղմոսէ շինուել ։ Նշանակեալ ․147. Սաղմոսն մին Սաղմոսէ ․ այլ երկու Սաղմոսէ շինուել ։ տես Յամարերգան ... Աճյառնից ։

Իսկ անկանոնք են անընդունելիք ․ և անարգեալ ք Յեկեղեցւոյ ․ որպիսի են՝ աւետարանն Թովմայի ․ Գիրք Մանկութեան Յի ․ տես երես ․214 ։ Ճեմարան Գիտելեաց տպ Երկրորդ 'ի Վենետիկ ․1818 ։

և 'ի Պատմութեան ժողովոյ արարեալ 'ի Սիոն կաթողիկոսէ՝ 'ի մեր Թուին ․ ՄԺԷ ․ 768 ․ յորինակ ինչ, 'ի 25 կանոնին՝ Թէպէտ ըստ այլ Սուրբ Գիրս ոչ դնի (Սիրաք) Բայց օրինադրի ընթեռնուլ առ 'ի ուսումն մանկանց ։ տես երես ․192 ․ Նորէն Աղօթից ժամագրքի տպեալ 'ի Վենետիկ ․1801 ։

Յաւելուած

Սիրաք ։ Խօսք Սիրաքայ ։ Եզր Երրորդ ։ Աղօթք Մանասէի ։ Թուղթ Կորնթացւոց առ Պաւղոս ։ Հանգիստ Յովհաննու ։ Աղերս Եւթաղէ ։ տես Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց Հայոց Առաջին ․ Նախաբանութիւն առ վերծանօղին ․ երես ․ 31 ․ տպեալ ․ 'ի Վենետիկ ․ 1805 ։ և Հայոց ․ ամփոփ ։ Ըստ է Սաղմոս ինքնագիր Դաւթի արտաքոյ թուոց ։ և Սոյն Չորրորդ յաւելուած 'ի տեղ վերջս աւանել շնորհն Կորնթացւոց առ Պաւղոս առաքեալ, հանդերձ պատասխանեաւ նորին առաքելոյ ․ ․ ․ 'ի պարագրութիւն խորհրդոյն պարգևեցին 'ի Լոնդոնին Յամին ․1736 ։ տես 'ի նոյն Աճառնէ Հայոց երրորդ երես ․138 ։ և Հայոց չորրորդ երես ․ 2 ․ 'ի Յաւելուած Աճառնից մատենին ։

Այս աւանդաբանութիւն ։ կտակարանաց իբրև աղաւաղեալ անիրքն ․ ամենեցուն գրոց ․ ․ չէ կարգացուք գիտել՝ զինչ ինչ արտաքոյ արտաքոյ ասացաւ՝ 'ի մէջ ծածկելոյն գաղտնեալ ։ Աղաւէն իմաստութիւնն ․ որ 'ի յոլովից Սողոմոնի ենթագիր ։ և Յեսուայ որդւոյ Սիրաքայ Գիրք՝ և Յուդիթ՝ և Տովբիթ՝ և պատօր ․ ոչ են ներ կանոնում ։ տես երես ․ 746 ․ 'ի Հին և Նոր Կտակարանն տպեալ Յամստերդամ ․ 'ի Թուում փրկչին ․ 1666 ։ Իսկ Հայոց ․ ամփոփ ։ Եւ մասին և տես ․13 ․ ամփոփ երես ․ 8 ։

№ 6983

THE

NAMES AND ORDER

OF ALL THE

# BOOKS OF THE OLD AND NEW TESTAMENT,

WITH

THE NUMBER OF THEIR CHAPTERS.

---

Անուանք և կարգ Աստուածային Գրոց Հին և Նոր Կտակարանի համաձայն
Թուով Գլխոց Նոցա Ըստ Անգղիական Թարգմանութեան ։

---

## *The Books of the Old Testament.*

Գիրք Հնոյ Կտակարանի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծնունդք ունի Գլուխս. | 50 | 2. Ժամանակագրութիւն. | 36 | Դանիէլ Մարգարէ - - | 12 |
| Ելք - - - - - - - | 40 | Եզրաս (Հայոց. 2. Եզրաս) | 10 | Ովսեայ - - - - - - | 14 |
| Ղեւտական - - - - - | 27 | Նեեմիա (Հայոց. 3. Եզրաս) | 13 | Յովէլեայ - - - - - | 3 |
| Թիւք - - - - - - | 36 | Եսթեր - - - - - - | 10 | Ամովսայ - - - - - - | 9 |
| Երկրորդ Օրէնք - - - | 34 | Յոբ - - - - - - | 42 | Աբդիու - - - - - - | 1 |
| Գիրք Յեսուայ - - - | 24 | Սաղմոսք Դաւթի - - - | 150 | Յովնան - - - - - - | 4 |
| Դատաւորք - - - - - | 21 | Առակք Սողոմոնի - - - | 31 | Միքիայ - - - - - - | 7 |
| Հռութ - - - - - - | 4 | Եկկլեսիաստէս - - - | 12 | Նաւումայ - - - - - | 3 |
| Առաջին Սամուէլ - - | 31 | Երգ Սողոմոնի - - - - | 8 | Ամբակումայ - - - - - | 3 |
| Երկրորդ Սամուէլ - - | 24 | Եսայի Մարգարէ - - - | 66 | Սոփոնիայ - - - - - | 3 |
| Առաջին Թագաւորաց - | 22 | Երեմեայ - - - - - | 52 | Անգեայ - - - - - - | 2 |
| Երկրորդ Թագաւորաց - | 25 | Ողբք - - - - - - | 5 | Զաքարիայ - - - - - | 14 |
| 1. Ժամանակագրութիւն - | 29 | Եզեկիէլ - - - - - | 48 | Մաղաքիայ - - - - - | 4 |

---

## *The Books of the New Testament.*

Գիրք Նորոյ Կտակարանի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մատթէոս ունի Գլուխս - | 28 | Թուղթ առ Եփեսացւոց - | 6 | Թուղթ առ Եբրայեցիս - | 13 |
| Մարկոս - - - - - | 16 | Փիլիպեցւոց - | 4 | Յակոբայ - - - - - | 5 |
| Ղուկաս - - - - - | 24 | Կողոսացւոց - | 4 | Առաջին Պետրոսի - - | 5 |
| Յովհաննէս - - - - | 21 | Առաջին Թեսաղոնիկեցւոց | 5 | Երկրորդ Պետրոսի - - | 3 |
| Գործք Առաքելոց - - | 28 | Երկրորդ Թեսաղոնիկեցւոց | 3 | Առաջին Յովհաննու - - | 5 |
| Թուղթք առ Հռովմայեցիս | 16 | Առաջին Տիմոթէոսի - - | 6 | Երկրորդ Յովհաննու - - | 1 |
| Առաջին Կորնթացւոց - | 16 | Երկրորդ Տիմոթէոսի - - | 4 | Երրորդ Յովհաննու - - | 1 |
| Երկրորդ Կորնթացւոց - | 13 | Տիտոսի - - - - - - | 3 | Յուդայի - - - - - - | 1 |
| Թուղթ առ Գաղատացւոց | 6 | Փիլիմոնի - - - - - | 1 | Յայտնութիւն - - - - | 22 |